

Հով. ԹՈՒՄԱՆՅԱՆ



ՊԱՏՄԿԱԾՔՆԵՐ

ՀԱՅՊԵՏԿՐԱՏ

891.99-93

" Թ-89

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք

ՀՈՎԷ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

2119
A III




ՀԱՅԳԵՏՐԱՏ

ՀԻՄՈՒ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ԽԱՆԿԱ-ՊԱՏՈՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԻՆ,
ԵՐԵՎԱՆ 1948

ՇԱՊԻԿԸ ԵՎ ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՀՈՎԷ. ՇԱՎԱՐՇԻ

ՕՎ. ԿՄԱՆՅԱՆ
ՐԱՏՏԱԿԱԶՅԻ
(Ու յարմարական յայտն)
Արմգիզ, Երևան, 1918



Գ Ի Ք Ո Ր Ը

1.

Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել:

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի դործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում:

— Չեմ ուզում, իմ քորիա երեխին էն անիրավ աշխարհը մի գցիլ, չեմ ուզում — լալիս էր կինը:

Իայց Համբոն չլսեց:

Մի խաղաղ առավոտ էր. մի տխուր առավոտ: Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաշեցին ու ճամփա դրին:

Քույրը, Չանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գայոն մոր գրկից ձայն էր տալիս — «Գիքոր, էա ո՞ւր ես գնում, հե՛ր Գիքոր՛ը»:

Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր դեռ գյուղի ծերին կանգնած են նրանք ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը: Գարձյալ հոր կողքով վազում կամ առաջ էր ընկնում: Մին էլ ետ նայեց. գյուղը ծածկվել էր բլուրի ետև:

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում:

— Արի հա՛, Գիքոր Չան, արի հա՛, հասանք հա՛, — որդուն կանչելով գնում էր Համբոն, շալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա թուփուն:

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը հեռո՛ւ մշուշում:

— Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛, — ցույց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չէր երևում, ու անցան:

Առաջին իրիկունը ղոնախ ընկան մի գյուղում: Տանտերը Համբոյի հին ծանոթն էր:



— Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛...

Գեղին սամուլարը թշուած էր տախտի ծերին: Մի ջահել աղ-
ջեկ շրջակայքի սկայնելով բաժակները լվանում ու թեյ էր ըն-
նում: Նա մի կարմիր շոր ունէր հագին: Գիքորն էնտեղ մտքումը
գրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Չաննի համար մի
էնտեսակ շոր դարկի:

Իրիկնահացից ետը տանտերն ու Համբոն թինկը տված, չի-
բուխ քաշելով գրույց էին անում: Սոսեցին Գիքորի մասին:
Տանտերը դովեց Համբոյին, որ շարչարվում էր որդուն մարդ
չինի: Հետո սկսեցին խոսել կովի վրա, հացի թանգության վրա,
բայց Գիքորը շատ էր հոգնած, քունը տարավ:

Մյուս օրը քաղաք մտան: Գնացին ծերունի թավլաչու մոտ:
Առավոտը բազարն իջան:

— Բիձա, էդ երեսին ծառա ես տալո՞ւ, — խանութի ներսից
հարցրեց մի վաճառական:

— Հրամանք ես, — ասավ Համբոն ու Գիքորին էն կողմը հրեց:

— Բեր ինձ տուր, ես կրունեմ, — առաջարկեց վաճառականը:

Նրան ասում էին բազաղ Արտեմ:

2.

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ բազաղ Արտեմի
տանը: Պայմանն էն էր, որ Գիքորը պետք է տունը մաքրեր,
ամանները լվանար, ոտնամանները սրբեր, դուքանը բաժին տա-
ներ, ու էս տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի:

Մի տարուց ետը բազաղը նրան պետք է տաներ դուքան,
չիններ դուքանի «աշկերտ» ու հսպես Գիքորը պետք է բարձրա-
նար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ, — ասավ բազաղը պայմանը
կապելիս: — Թե դրուստը կուղես, դեռ դու պետք է տաս, որ
քու որդին բան է սովորելու: Ախար իսկի բան չգիտի...

— Որտեղից գիտենա, խաղեին ջան, — պատասխանեց Համ-
բոն, — որ գիտենար, էլ ո՞ւր կբերելի, ես էլ բերել եմ, որ բան
սովորի...

Չեր կողմերից էն Նիկոլն ինչ է, որ իրեն համար դուքան
ունի բաց արած, նա էլ ինձ մոտ է մարդ դառել: Ամա վերջում
մի ջուխտ շայի գդալ ու մի քանի բան գողացավ...

— Չէ, խաղեին ջան, սա գողանալ չի: Որ էդպես բան անի,
կգամ կոնիցը կրունեմ էն Բուռը կգցեմ:

— Հա՛, որ ձեռք հալալ է՝ մարդ կդառնա:

— Ի՞նչ դարդն էլ էն ա, աղա ջան, որ մարդ դառնա, լեզու

սովորի, գրիլ-կարգալ սովորի, նստիլ-վեր կենալ սովորի, մարդ
ճանաչի, որ աշխարհումն ինձ նման խեղճ ու դուրի չմնա... Ին-
քըն էլ աչքաբաց երեխա յա, մեր գեղական շիրուամն էլ գրանա-
նաչ ա էլել, գրի սեն ու սպիտակը շոկում ա: Ամա աղաչանքս
էն ա, որ լավ մտիկ անեք, դարբիք երեխա յա, քորվա յա...

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց բարձր
ձենով հրամայելով — «Չայ բերեք, հաց բերեք սրանց հա-
մար...»:

3.

Հեր ու որդի նստած էին բազազ Արտեմի խոհանոցում:

— Դե, հիմի դու գետես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ
տղա ես դուրս գալի... Հենց պետք է անես, որ... ես ինչ գի-
տեմ... ո՞վ Տեր Աստոծ... — մոնչաց Համբոն ու չիբուխը Երեց:

Այն ինչ Գիքորը չորս կողմն էր դիտում:

— Ապի, սրանք բուխարի չունեն՝

— Չէ՛, սրանցը փեչն ա, այ էն ա փեչը...

— Կալ էլ չունեն՝

— Սրանք քաղաքացի են, գեղացի հո չեն, որ կալ կալսեն:

— Բա ո՞րտեղից են հաց ուտում:

— Փողով առնում են ուտո՞ւմ: Հացն էլ են փողով առնում,
եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փեան էլ, ջուրն էլ...

— Վա՛՛... ..

— Բա՛, սրան Թիֆլիզ կտան: Դու հալա դոչաղ կաց, գեո-
չատ բան կիմանաս:

— Ապի, սրանք ժամ ունեն... ..

— Ունեն բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են:

Մտիկ արա հա — ձեռնաքաշություն չանես: Կարելի ա քեզ փոր-
ձելու համար փող վեր կոցեն, մոտենաս ոչ: Թե վերցնես էլ,
տար ասա — «խանում էս ի՛նչ փող ա, էնտեղ վեր ընկած էր.
աղա՛ էս բանն էստեղ գտա» թե չէ...

— Էստեղ էլ պրիստավ կա՞ որ...

— Կա բա՞ս... Վախտ ու անվախտ դես դեն չընկնես, ձեռդ
ընկած փողը քոռ ու փուչ չանես, հազար ու մի պակասություն
ունենք: Գեղ էլ լավ պահի, գիշերները բաց չըլես, մրսես ոչ...


Մի մին եկողի հետ գիր դարկի... — մերթ մերթ չիբուխը
բերանից հանելով որդուն խրատում էր Համբոն: Այն ինչ Գի-
քորը ննջում էր:

— Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կերակուրի թեր-
մացքը կտան, շատ անգամ էլ իրանք կուտեն քեզ տալ չեն, բան

Ճիշտ, ծառայի կարգն է դա... օրեր են, կմթնեն անց կկենան...
Շարունակում էր հերն իր խրատը, բայց Գիքորը հորը թին-
կը տված քնել էր արդեն:

Ին երկու օրը նա հնքան բան էր տեսել, էս ու էն կողմը
հայել, որ հոգնել էր բոլորովին:

Մրդով լիքը խանութները, դեղերի նման դարսած գույնը՝
զույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան դնա-
ցող կամ դարձող երեսաների խմբերը, իրար ետևից սլացող
կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բարձած ավանակները,
թարախները գլխներին կինտոնները... էս ամենի դոռոցն ու
զնդոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնված զժվրժում էր
նրա գլխում: Եվ նա հոգնել էր ու հորը թինկը տված քնել:



Իս ժամանակ բազազն ու իր կինը միմյան էին ներսը: Կինը
արտնջում էր, որ ծառան խամ էր, նոր սարիցն եկած, վայրենի,
խակ մարդն ուրախ էր, որ մի քանի տարով անվարձ ծառա էր
գտել:

— Կտովորի, հո էդպես չի մնալ, — ասում էր նա կնոջը:

— Կտովորի, որդի, սիրտդ շուռ մի բերի, — խնդրում էր
բազազի պառավ մայրը:

Բայց տիկին Նատոն չէր համոզվում: Նա արտասովորով անի-
ծում էր իր բախտը:

4.

Գիքորը մենակ նստած էր բազազ Արտեմի խոհանոցում: Նա
արդեն ծառայության մեջ էր:

Սաղեինի հին գլխարկը մինչև ականջները կոխած գլուխը,
հին ոտնամանները ստներին, մի մավի բլուզ էլ հազին, հսպես
ուսից գլուխ փոխված, նա նստած էր խոհանոցում ու միտք էր
անում, թե ընչի եկավ իրենց գյուղից, որտեղ է ընկել, հիմի ինչ
պետք է անի...

Իս ժամանակ ներս մտավ տիկին Նատոն:

Գիքորը տեղը նստած էր:

Տիկինը մի բան ասավ: Գիքորը լավ չլսեց, թե չհասկացավ:

— Քե՞զ չեմ ասում, տո արջի քոթոթ:

Գիքորը չփոթվեց, քրանեց. մին ուղեց հարցնի թե ինչ է

ասում, մին էլ սիրտ չարավ: Աղջիկ պարոնը բարկացած գուրդ
գնաց:

— Ը՛հ, հողեմ ձեր գլուխը, որ վայրենի եք ու գալիս եք
մարդի գլխի խաթա դառնում... Ես բան եմ ասում, սա տեղից
էլ ժաժ չի գալի, ձեն էլ չի հանում...

— Վերջացավ, — անցավ Գիքորի մտքովը: Բայց ի՞նչ շտա
վերջացավ... ի՞նչ վատ վերջացավ... Հիմի ես ի՞նչ անեմ...
հերս էլ գնաց...

Եվ ամեն բան նա վերջացած էր համարում, երբ իրեն-իրեն
խոսելով ներս մտավ սև շորերով բարի պառավը, բազազի մերը:

— Որ աղջիկ պարոնը ներս է գալի, տեղիցը ընչի՞ չեա կանգ
նում, որդի, — խրատում էր նա Գիքորին, — որ բան են հարցնում,
ձեն հանի... ո՞նց կըլի հղպես...

Պառավին դեղի էին ասում:

Դեղին սովորեցնում էր Գիքորին, թե ինչ պետք է անի,
ինչպես սամովարը դցի, ոտնամանները սրբի, չոտիը բռնի, ա
մանները լվանա...

Բացի պառավ դեղին, ամենքը նեղացնում էին նրան:

Բազազի «դուքանի աշկերտներն» էլ շարունակ ծաղրում
էին նրան, «քիքի» էին կանչում, քիթը քաշում, գլխին խփում,
գլխարկը կոխում ականջները:

Բայց էս բոլորը տանելի բաներ էին:

Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին գիմանա
իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առ
նում, կճուճիցը պանկր էր հանում, ուտելով գնում խաղաշու,
կամ թե չէ՝ փեշն էր դնում, գնում հանդը: Երբ ուզում էր մի
ծառի տակի կամ աղբրի վրա նստում էր ուտում:

Հիմի հստեղ ուրիշ տեսակ էր: Ինչքան էլ սոված լիներ պետք
է սպասեր մինչև ճաշի ժամանակը դառ, էն էլ ամենքն ուտելին,
հետո ինքը: Էդ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր գալի, որ
խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթռում:

Մին, երկու, տասը համբերելուց ետը, նա սկսեց չորս կողմն
աչք ածել խոհանոցում, թե արդյոք մի բան չի գտնիլ ուտելու,
որ սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը դա:

Սկզբում ինչ գտնում էր — չոր հացի փշրանք, կրճած սպիտ
թե ուրիշ բան, գցում էր բերանը: Մի քիչ հետո մտածեց խոհա
նոցի պահարանները որոնել: Այա թե սովորեց կերակուր
պղնձից կիսեփ մսի կտոր դուրս քաշել...

Բայց եթե նկատեի՞ն...

Ինչ վատ բան դուրս կգա՞ր...

Եթե նկատեի՞ն...

Հապա ի՞նչ անես...

Թողնե՞ս, փախչե՞ս...

Եվ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին:

Բայց ո՞նց փախչես, ո՞ր կողմը փախչես. մենա՛կ, ճամփա
չգիտես, մարդ չես ճանաչում... Իսկ հերը...

Էնքան չարչարվեց, խոսեց, խրատեց՝ «օրեր են, որդի, կը
մթնեն, անց կկենան...»:

Եվ ահա Գիքորի գլխում հնչում է հոր խանձված ձենը.—
«օրեր են, կմթնեն, անց կկենա՛ն... անց կկենա՛ն...»:

Զ.

Չանգը տվին:

Գիքորը վեր թռավ: Ասել էին, թե երբ դանդը տալիս են,
դնա տեսնի՝ ով է, ինչ է ուղում: Նա դուրս եկավ, պատշգամբից
նայեց, տեսավ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջը
կանդնած:

— Էդ ո՞վ եք հե՛յ, — ձայն տվավ վերևից:

Ներքևից վերև նայեցին:

Տիկիները ծիծաղեցին, իսկ պարոնը ակնոցներն ուղղելով
հարցրեց:

— Աղջիկ պարոնը տա՞նն է:

— Ի՞նչ եք անում, — հարցրեց Գիքորը:

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ:

— Քեզ հարցնում են տա՞նն է, թե չէ, — բարկացավ պարոնը:

— Բան ունե՞ք:

Էս աղմուկի վրա տիկիները դուրս եկավ:

— Քրքրվես դու, դնա դուռը բաց արա, շո՛ւտ, — ճչաց ու
սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն: Բայց շուտով հյուրերն
երևացին և նա ժպտալով դիմավորեց:

— Ա՛ր բարև, բարև... էս ո՞ր խաչիցն էք, ի՞նչպես է որ
մտաբերեցիք...

— Է՞ն ո՞րտեղից եք գտել, — ոտից գլուխը Գիքորին չափելով
հարցրեց պարոնը, իսկ տիկիները շարունակ ծիծաղում էին:

— Ի՞նչ եք նախանձում, կուզեք ձեզ տանք, — կատակի տվավ
տիկիներն ու հյուրերը խնդալով ներս մտան:

Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց ետևից իս-
կույն ներս մտավ և տիկին Նատոն:

Իրար առողջութուն հարցնելուց ետք հյուրերն սկսեցին
պատմել իրենց ներս մտնելու պատմութունը, և դուրս եկավ մի
ահագին պատմութուն:

— Օ՛Ք, սիրտս մաշել է, — դանդաատվում էր տիկին Նատոն.—

Թե իմանաք՝ ինչ եմ քաշում ես դրա ձեռիցը: Ասում եմ դուքս
անենք կորչի, բայց դե Սրտեմի բնավորությունը դիտեք էլի,
ասում է՝ մեղք է, գեղացի երեխա է, թող կենա, մի կտոր հաց
է, ուտի, կսովորի... Ախր էլ ե՞րբ... սիրտս մաշեց...

— Օ՛հ, օ՛հ, օ՛հ, էդ ծառաների բանն էլ մի՛ ասի, — էս ու
էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը:

Մի կես ժամ խոսեցին դեսից-դենից, ծառաներից, քաղաքի
նորություններից: Հենց էդ խոսակցության ժամանակ ներս մը-
տավ քրտնած Գիքորը:

— Աղջիկ պարոն, միբոլբ բերի:

— Հա, լավ, դնա՛, — հրամայեց տիկինը կարմրելով, իսկ
հյուրերն սկսեցին ծիծաղել:

— Աղջիկ պարոն, խաղեինն ասում էր՝ բալը թանգ ա, հար-
կավոր չի...

էս խոսքերի վրա հյուրերից ոմանք պոռթկացին ու թաշկի-
նակով բերաններին հուպ տվին, ոմանք էլ տանտիկնոջ խայտա-
ռակությունը ծածկելու համար վկայեցին, թե իրավ բալը շատ
թանգ է, էս ժամանակին ով է բալ առնում: Ապա սկսեցին հան-
դիմանել, թե ինչ հարկավոր է միբոլբ, հո ուտելու համար չեն
եկել, ինչ են նեղություն քաշում...

Տանտիկինը մինչև ականջակոթերը կարմրած, աշխատում
էր մի կերպ եղածն ուղղի:

— Ով դիտի ինչ է ասել, չի հասկացել էս հիմարը:

— Ով սուտ ասի՝ դետինը մանի, երդվեց Գիքորը, ու ամեն
բան լրացավ:

6.

Հյուրերին ճամփու դնելուց ետը տիկին Նատոն բարկացած,
բարձր-բարձր խոսելով վեր էր քաղում մրդի սեղանը: Նա հայ-
հոյում էր Գիքորին, մեկ-մեկ թվում էր թե ինչեր է անում նա,
անիծում էր իր բախտը, իր ամուսնուն:

— Քա՛, խամ է, որդի, կսովորի, որդի... ինչի ես սիրադ
չուտ բերում... Ա՛խ աստո՞ժ, ինչի՞ չես հողիս առնում, — հա-
ռաչում էր պառավ դեղին:

— Երանի մի՞ իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամա-
նակը դու ինչուս խոսում... Սամ է, դե գնացեք դուք շինեցեք,
ես հո ձեր գերին չեմ, — ձենն ավելի բարձրացնելով պատասխա-
նեց պառավին հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անեծքը
մինչև ամուսինը տուն գար:

Ամուսնու ոտնաձայնը որ լսեց՝ սկսեց արտաավել, ավելի
բարձր խոսել ու ամաններն իրար դիխով տալ:

— Ասում եմ՝ դուքս արա կորչի. ես ծառայի բանն էլ կանեմ, թե խնայում ես՝ փող տաս, կարգին ծառա բռնես... Լավ է մարդ ծառայի տեղ էլ քաշ դա, քան թե ամեն օր էսենց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հո չե՞ս...

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց բաղազը՝ տան մեջտեղը կանգնելով:

— Ի՞նչ պետք է պատահի. էս էր մնացել, որ խալխի մտտ էլ մարդ գետինը մտնի, էս էլ արիք. էլ ի՞նչ պատահի, — վրա թռավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը:

— Վա՛հ, — բացադանչեց բաղազը:

— Ա՛խ աստո՛՛ծ, — հառաչում էր բարբի պառավը՝ դեռ ու դեն ընկնելով:

Բաղազը Գիքորին ձեն տվեց:

Թմփթմփացնելով Գիքորը ներս ընկավ:

— Մտախի արի, — կանչեց բաղազը:

Գիքորը վախեց նրա դուռնից, մնաց տեղը կանգնած:

— Գեղ ասում եմ՝ մոտիկ արի...

Գիքորն էս անգամ շարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած:

— Տո, արջի քոթոթ, ես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, դու դալիս ես դոնախներին ասում, թե բալը թանգ էր...

— Ես ... ես ... աղջիկ պարոնին ... — ուղում էր արդարանա Գիքորը, բայց խոսքը բերանում ապտակը հասավ, աչքերը կայծակին տվին, դուռիսը դիպավ կողքի պատուխն ու վեր ընկավ: Հենց ընկած տեղն սկսեց բաղազը ստքել անդադար կրկնելով — «բալը թանգ էր հը՞ ... բալը թանգ էր, հը՞...»

Պառավ դեղին դողդողալով մեջ ընկավ, աշխատում էր ետ քաշի կատաղած որդուն, աղջիկ պարոնն էլ եկավ, երեսաներն էլ սկսեցին ճչալ, բաղազը ետ կանգնեց հեալով ու կրկնելով — «բալը թանգ էր, հը՞», — աչքերը միշտ չռած անկյունում կծկրված Գիքորի վրա, որ դողալով ու ցավագին մրմնջում էր:

— Վայ, նանի ջան, վա՛յ... վա՛յ, նանի ջան, վա՛յ...

Տեսան տանը չի կարողանում ծառայի՝ խալխի տարան Գիքորին: Էնտեղ ապրանք պետք է տային մուշտարիների հետ տանելու, չիթ պետք է ծալեր, խանութը սրբեր, խիկ պարապ ժամանակը մուշտարի կանչեր:

Եվ ահա Գիքորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշված ու տոգուլն, մեծ մեծ ոտնամանները քաշ տա-

լով անց է կենում կամուրջով: Նայեց ներքև: Քարվանսարաների
բարձր պատերին դարկելով ծառս էր լինում Գուռը, ոլորվում,
պտրտվում ու ճնշվելով խեղդվում, խուլ խշշում կամուրջի
տակին:

Ասիից մոտիկ պտրտում էր մի կանաչ նավակ: Երկու հողի
կային նրա մեջ. մինը ուռկան էր ձգում, մյուսը նախն էր կա-
ռավարում:

«Ա՛յ հիմի կհանի» ասավ Գիքորն ու կանգնած նայում էր
ձկնորսներին: Ուռկանը դատարկ դուրս եկավ:

— Էս մինն իմ բախտիցը — ասավ Գիքորն ուռկանը ձգելիս:
Գիքորի բախտը դատարկ դուրս եկավ:

— Էս մինն էլ մեր Չաննի բախտիցը:

Էս էլ դատարկ դուրս եկավ:

— Էս մինն էլ Գալոյի բախտիցը: Գալոն էլ էր անբախտ:

— Էս մինն էլ բաս ...

Բայց այդ ժամանակ մոտիկ քարվանսարի դռանը աղմուկ
բարձրացավ: Մի պարսիկ կապիկ էր պար ածում երգելով:

Ա՛յ արի, արի, մեյմուն,
Ճիպտորդ սարի, մեյմուն,
Պառավի պես կուզի կուզ,
Ջահելի պես պարի, մեյմուն:

Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին չորս կողմ
մից: Գիքորն էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը
մտնի, առաջ անցնի, չկարողացավ: Վիզը ձգեց, սլճեղներն վրա
կանգնեց ու ճգնում էր անսպասճառ տեսնի թե ինչ է կատարվում
մեջ տեղը:

— Ի՞նչ ես ներս խծկվում, տո լածիրակ, դնա քու բանին, —
ասավ մի կինտո ու դարկեց գլխին:

Գիքորը հանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութը:

8.

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցում: Դեռ արտա-
սուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խաղեխնի
ապտակների քաղերը, դեռ նոր էր լռել աղջիկ պարոնի ձենը —
չվզվացնելով ներս մտավ Վասոն, բազազի աչկերտը: Գիքորին
նկատելով նա խեղույն կանգ առավ ու մասխարա դեմքին լրջու-
թյուն տալով սպառնալի հարցրեց.

— Կլուբո՞ւմն ուշացա՞ր, տո արջի քոթոթ, թե դու բերնատի
մոտ վազ դորձ ունեիր...

Գիքորը գլուխը չէր բարձրացնում:

— Ասա մի տեսնեմ է՛, տո՛... .

Գիքորը լուռ էր:

— Չե՞ս իմանում, տո՛. ո՞րտեղ էիր, է՛, որ հսօր ինձ քաղցած ապանեցիր. որ մեռնեի՝ ետո՞... .

Հսպես խոսելով կամաց կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին: Վաստն պատրաստվում էր մի ուրիշ ձևի հարված էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խաղեինի ձայնը: Գալիս էր:

— Արա տես հիմի քեզ ի՞նչ է սնում, — սպառնաց Վաստն:

«Հիմի ինձ կսպանեն», անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ:

Պաղեինը արդեն բավականին ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չտան, որ իմանա թե ինչ բան է քաղցածութունը:

Վաստնի անցավ:

Գիքորը հանդատացավ, թեև լսում էր աղջիկ-սլարոնի ձայնը որ ճչում էր. — Ախր ընչի՞ ես պահում, դուրս արա կորչի էլի, դուրս արա կորչի՛... .

9.

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ:

«Լուսնյակ դիշեր, բոլորովին քուն չունեմ,
ինձ տեսնողը կարծում է թե տուն չունեմ, վա՛յ, տուն
չունե՛մ...» .

Իր երգը երգելով Վաստն հաց էր ուտում: Գիքորը վերմակի տակից երբեմն զգույշ ծիկրակում, թաքուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա էն օրը հաց չէր դրել բերանը. ծեծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում:

— Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի տանում հա՛, էդպե՛ս... .

— Նկատեց չարածճի Վաստն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին: — Դե, առ, տեղի տակին թաքուն կե՛ր, խաղեինը չի՛ մանա:

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը՝ գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտածում: Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ աղատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում էր էն երեկոների վրա, երբ

հերն ու մերը կուլում էին իրեն քաղաք բերելու համար... մերը
լաց էր լինում, չէր ուզում...

— Ա՛խ նանի ջան, ի՛նչ լավ էր սիրտդ խմացել, — հառաչում
էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում ախանջը
սրած, թե խաղեինը հո չի դալի:

Իսկ առաջուրը կանգնած էր խանութի դռանը:

10.

Խանութի դռանը կանգնած ձեն. էր տալի Գիքորը, մուշ-
տարի էր կանչում ու բարձր ձենով գուլում իրենց ապրանքը:

— Կանչի է՛, տո՛ւ. ինչ ես մ՛նջվել, մ՛նացել կանգնած: Բերա-
նումդ հո ջուր չկա:

— Է՛ստի համեցե՛ք... է՛ստի համեցե՛ք... — կանչում էր
Գիքորը:

Ներսը ծիծաղից թուլանում էին:

Նրան սովորեցրել էին, որ մուշտարի քաշի դեպի իրենց խա-
նութը: Եվ նա հաճախ բռնում էր էս կամ էն անցորդի փեշից,
կոպիտ ու համառ սկսում էր քաշել դեպի խանութը, ու բաց չէր
թողնում, մինչև որ մարդը դուրս էր դալի համբերությունից:
Գալիս էր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում:

Սմառվա տոթ օրերին, խանութի դռանը երկար կանգնելուց
հոգնած, նա երբեմն նստած քնում էր խանութի առաջին դարսած
չիթերի վրա:

Էդ ժամանակ չարածձի ընկերները կամ հարևանները բռնո-
թի էին բռնում նրա քթի տակը:

Նա փուշտալով վեր էր թռչում:

Շողից թմբած վաճառականները զվարճանում էին: Իսկ
խաղեինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն էր տալի.

— Քնում ե՞ս, տո, արջի քոթոթ, կանչի է՛...


— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք, — ձեն էր տալի Գի-
քորը:

11.

Մի օր էլ Գիքորը երբ մուշտարի էր կանչում՝ դիմացից ել-
կու գյուղացի դուրս եկան: Նա վաղեց, փաթաթվեց գյուղացի-
ներին:

— Ս՛յ տղա, իսկի ճանաչեցի ոչ, էս ի՛նչ բան էր, — գարմա-
ցած բացադանչեց գյուղացիներից մինը ու դարձավ ընկերին:

- Բազո, դու կճանաչե՞ր ...
- Ես աչքերիցը կճանաչեի, — պարծեցավ ընկերը:
- Ճշմարիտ որ Գիքորը շատ էր փոխվել, շատ էր մաշվել: Ինքն էլ էր փոխվել, շորերն էլ: Դժվար էր ճանաչելը:
- Ա՛յ տղա, էս կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շնորհքին... — հիանում էին գյուղացիները:
- Համբոյի հողը մեր գլխին. տես, նա իրա տղին ո՛րտեղ հասցրեց, մեր տղերքը էնտեղ խող են արածացնում...
Այն ինչ Գիքորը իրար ետևից հարցնում էր.
- Իմ մերը ո՞նց ա... մեր երեխեքը ո՞նց են... իմ հերն ընչի՞ չեկավ... մեր կովը ծնել ա թե՞ չէ... մեր գեղումն ո՞վ ա մեռել ...
- Ամենն էլ լավ են, շատ բարով կանեն, — սրտասխանեցին գյուղացիք. — էն ա Սուքնանց Ղուկասը մեռավ, մին էլ Պուճուրանց պառավը, մնացածը լավ են:
- Բա իմ հերն ընչի՞ չի գալի:
- Քու հերը լավ ուզում ա, ամա ո՞նց դա: Ինքը մե՛նակ մի մարդ ա, սաղ տան ջափեն վրեն...
— Բա բան չեն դարգե՞լ...
- Ինչ ունեն, որ ինչ դարգեն, դու ձեր ասն բանը գիտեա ո՞չ: էս տարի էլ հացը բարակ էր, խեղճ հերդ գոռով ծերը ծերին ա հասցնում: Նրանցից ի՞նչ ես ուզում: Թե ունիա, դու դարգի, հրեն խարջ են ուզում — ձեռքին գոռ չունի:
- Հո մեր տանիցը օքճին չի՞ հիվանդացել:
- Չէ՛, էն ա ձեր Ծաղիկ կովը Միրզանց գոմի փլեկովը ներքև ընկավ սասկեց:
- Ծաղիկը սասկե՞ց...
- Խեղճ մերդ էնքան լաց եղավ աչքերն ուռան:
- էս ասելով գյուղացիներից մինը մի նամակ հանեց տվավ Գիքորին ու ասավ.
- Հիմի ի՞նչ ես ասում. մենք էլ քեզ տեսիլ չենք, դնալու ենք. թե մորդ կամ քվորդ համար բան ես դարգելու, տուր տանենք:
- Ո՞րտեղից բան դարգեմ, դեռ փող չեմ ստանում... ամա...
- Ամա ի՞նչ...
- Ուզում եմ ես էլ դամ ձեզ հետ: Համ մեր գեղին, համ մերոնց կարոտել եմ, համ էլ ...
- Վա՛յ, վա՛յ, մենք հենց իմացանք մարդ ես դառել, խելոքացել ես... էդ տեսակ բան կասե՞ն: Կստեղ քեզ համար աղափարի ապրում ես — շորերդ թաղա, ոտն ու ձեռդ խտակ... Մենք ասում ենք մեր երեխանցն էլ տեղ անես բերենք, դու էդ ի՞նչ ես



Էսպես հասարակացին գյուղացիներ, խրատեցին, մնաս բարով ասին
ու գնացին:

ասում: Էն որ ասել են՝ «խողի գլուխը դրին խալիչին, գլորվեց
էտ ցեխն ընկավ», հալալ քեզ համար են ասել:

Էսպես հանդիմանեցին գյուղացիները, խրատեցին, մնաս
բարով ասին ու գնացին:

Նրանց գնալուց ետը Գիքորն իր անկյունը քաշվեց ու բաց
ալավ հոր նամակը:

«Իմ սիրելի որդի Գիքոր ջան:

Ի քաղաքն Թիֆլիզ:

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առողջությունն ենք
ուզում, ամեն: Քեզ շատ կարոտով բարով են անում Ալին, նանը,
Չանին, Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն: Մեր սիրելի որդի Գի-
քոր, ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը
սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և Նանն ու Չանին
տկլոր են և տեղներս շատ նեղ ա: Գիքոր ջան, մի քանի մանեթ
փող դարդի և մի գիր դարդի քու որպիսությունիցը:

Եվ իմացած ըլես, որ Ծաղիկը սատկեց, և Նանն ու Չանին
տկլոր են»:

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր անում Գիքոր-
ը. դարդ էր անում իրենց տան համար: Սիրտը էրում էին նա-
մակի տողերը:

— Նանն ու Չանին տկլոր են... Տեղներս նեղ ա...

— Կանչի է՛, տո, ի՛նչ ես վերացել, ուշքդ հետները գնա՞ց...

— ձեն տվին ներսից:

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք, — կանչում էր Գիքորը
խանութի դռանը կանգնած:

A 2119

Չմեռը եկավ: Սառն աղմուկով ձյունախառն բուքը թռչում
է քաղաքի վրով: Փողոցներում սուլում, հոսան է անում: Վզա-
լով մտնում է անկյունները, աղքատի ու տկլորի է ման գալի,
պանդուխտ ու անտեր երեխա է որոնում:

Ահա գտավ Գիքորին:

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած ձեն
էր տալի նա.

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք...

— Հրե՛սս... — չարախինդ սուլելով ցուրտը, աներևույթ
թրի նման, զարկեց անցավ ոսկորները: Գիքորը դողաց:

Առանց էն էլ նա շատ էր մաշված. էդքանն էլ հերիք էր
ներան: Ու անկողին ընկավ:



Հիվանդ պառկած էր Գիքորը բազազ Արտեմի խոհանոցում: Պառավ դեղին օրը մի քանի անգամ ներս էր մտնում իրեն-իրեն խօսելով:

— Ի՞նչ կուզես, որդի՛, Գիքո՛ր:

— Զո՛ւր ...

Դեղին ջուր էր տալի: Հիվանդը դողդողուն ձեռներով բռնում, ազահ խմում էր ու կրկին ուզում:

— Էս սիրտս հովացնում չի, դե՛ղի... Ես մեր աղբբի սառը ջրիցն եմ ուզում, դե՛ղի... Ես մեր տունն եմ գնում... Ես ի՞նչ նանին եմ ուզում ...

Բազազ Արտեմը ցավի մեջ էր ընկել: Նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, ապսպրեց, որ Համրոն դա, իսկ Գիքորին տարավ քաղաքային հիվանդանոցը:

Էստեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած: Տխուր տներում էին ու օճորքին նայում անզոր հայացքներով:

Գիքորին էլ պակեցրին նրանց շարքում:

Էստեղ գտավ նրան հայրը:

— Էդ ինչ ես էլել, Գիքոր ջան, մղկտալով վրա ընկավ Համրոն:

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը:

— Գի՛քոր ջան, բա եկել եմ է՛, Գիքոր ջան... Ես քու տալի՛ եմ է՛...

Հիվանդը ոչինչ չհասկացավ: Նա դառանցում էր ու դառանցանքների մեջ կանչում էր — «Միկի՛չ, Զանի՛, Ապի՛, Նանի՛ ...»

— Էստեղ եմ, Գի՛քոր ջան, նանը դարկել ա, որ քեզ տանեմ մեր տունը ... գալիս չե՞ս... Միկի՛չն ու Զանին հրեն կտերք կանգնած քեզ ճամփա են պահում: Ի՞նչ ես ասում, դե խոսա Գիքոր ջան ...

— Է՛ստի համեցե՛ք, Է՛ստի համեցե՛ք, — բացազանչեց Հիվանդը, դանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում էր տաքության մեջ:

Մի երկու օրից ետը Համրոն գնում էր իրենց գյուղը:

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր: Կռան տակին տանալ էր շորերը, որ մերը լաց լինի վրեն: Ծորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չի կտորներ տ...

մի քանի քորոց դտան: Էն էլ երևի, քրոջ — Չաննի համար էք
հավաքել ու պահել...

Գնում էր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել,
որ էդ միևնույն ճամփով քաղաք եկավ իր Գիքորի հետ: Ահա
հատեղ էր, որ նա ասավ.

— Ապի, ոտներս ցավում են...

Եվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանդուտանալու...

Ահա հնտեղ էր, որ ասավ.

— Ապի, ծարավ եմ...

Ահա էն աղբյուրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա...

Մյուս օրը, երբ Համբոն անցնում էր լեռները՝ հեռվում
երևաց իրենց գյուղը:

Գյուղից դուրս կանգնած սպասում էին Նանը, Չանին, Մի-
կիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր դրկից կանչում էր

— Ալի՛, ալի՛, հե՛ր Գիքո՛ւլ...

Ա. Հ Մ Ա. Դ Ը

Ա.

Ես իմ մանկութեան դարունները անց եմ կացրել մեր սարերում:

Ես ի սիրում իմ տատոնց տունը ու միշտ այնտեղ էի լինում: Իմ քեռիներից ամենից փոքրը, Ահմադը — հովիվ էր:

Նա ինձ տանում էր, ման էր ածում դառների մեջ. հետը հանդից հաղարջի կարմիր ճյուղեր էր բերում ինձ համար, իսկ իրիկունները հանում էր սրինդն ու ածում:

Ու աստղալի, լուսնյակ դիշերները, ահադին խարույկի շուրջը բոլորած, ծափ էին տալի, խնդում էին իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ ես թիթեռի նման թռթում, պար էի դալի նրանց շրջանի մեջ:

Ահմադը թուրքի անուն է, դրա համար էլ երբ մենք խոզի միս էինք ուտում, միշտ տանեցիք հանաք էին անում, ծաղրում, ծիծաղում էին Ահմադի վրա, թե՛ Ահմադը հայացավ, Ահմադը հայացավ . . .

Ի հարկե, անունը լսողը կասեր թուրք է. բայց հենց ներս մտնել, տեսնել թե Ահմադը ինչպես է ժած դալի տանը, հերիք էր, իսկույն կիմանար, որ տան սիրելի տղան է:

Ում կամենում էր, տուն էր բերում, պատվում, ճամփու դնում: Աղքատը ողորմություն ուղեր, թե հարևանը հացփոխ, իր ձեռքով տաշտից փերցնում էր, տալիս: Տան աղջիկներին ու փոքրերին հրամայում էր, ծեծում էր, սիրում էր, ինչպես և մյուս քեռիներս: Անասունների համար հողին տալիս էր: Մինը հիվանդանալիս դրեթե ինքն էլ հետն էր հիվանդանում, էնքան էր սիրում: Ինքն էլ էնպես սիրելի էր ամենքին: Ահմադը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հետը կտրում էր: Ու ամբողջ օրը տատս ու պապս չորս կողմը պտտվում էին, ինչ որ լավ բան էին գտնում, շուրջն էին հավաքում, խնդրում էին թե ուրիշ ինչ կուզի սիրտը:



—Քո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան.

Մի առաջնորդ էլ վեր կացա, տեսնեմ՝ բոլոր տանեցիք տը-
խուր են:

Իմ տատը արտասովորով զթքթում էր, ման էր դալի անկյուն-
ներում ու ինքը չէր իմանում, թե ինչ էր անում: Հարսներն ու
աղջիկները լուռ, տխուր, ներս ու դուրս էին անում: Վրանի
գռան կողքին նստած խոսում էր իմ պապը, իսկ մե. քիչ հեռու
գլխակոթ նստած էին քեռիներս:

— Աստված լինի քո օգնականը, բալա ջան, խոսում էր
պապս: Չոր քարին դնալիս՝ չոր քարն էլ կանաչի քեզ համար:
Պակաս օրդ խնդությունով անց կենա... Իե, վեր կաց, օրն անց
է կենում, ճամփեդ երկար է: Վեր կաց, բալա ջան:

Ահմադը չուի փեշով աչքերը սրբեց, վեր կացավ, եկավ
մոտեցավ իմ պապին: Պապս գրկեց, համբուրեց Ահմադին, ու
աչքերը լցվեցին արտասուքով:

— Ինչ աշխատանքը մեզ հալալ արա Ահմադ ջան, մեր աղն
ու հացն էլ քեզ հալալ լինի, քո մոր կաթնի պես: Մեզ մտիցդ
գցես ոչ: Թե աջողություն ունենաս՝ իմացրու, որ մենք էլ ու-
րախանանք, թե պակասություն ունես իմացրու, որ հարեհաս
լինենք: Իե, դնա, քեզ մատաղ, աստված բարի ճամփա տա:

Այդ թե տատս գրկեց, համբուրեց Ահմադին, հետո մնա-
ցածները լաց լինելով ձեռն առան: Այլուչ կտրած փոքրերիս էլ
Ահմադը համբուրեց և մի երկու կով, հորթ, գոմեշ, ձագ, մի
կրտրկան ոչխար, մի բարձած էշ առաջն արած, երկու շուն էլ
ետը գցած, ճանապարհ բնկավ:

Մյուս քեռիներս ուղեկցում էին Ահմադին:

Աստված բարի ճամփա տա, Ահմադ ջան, մնաս բարով, բա-
լա ջան, — ձեռքը ճակատին դրած ետևեց ձայն էր տալի պապս:

Ահմադը անցավ սարի մյուս կողմը, մյուս քեռիներս վերա-
դարձան: «Բայց ինչո՞ւ էին լաց լինում մեր տանը, քեռի Ահմադը
ո՞ւր գնաց» մտածում էի ես:

— Ահմադը ո՞ւր գնաց, նանի — հարցրի իմ տատին:

— Իրենց տունը գնաց, — պատասխանեց տատս:

— Իրենց տունը ո՞րն է...

— Ուրիշ տեղ է:

— Ահմադը ո՞վ էր որ...

- Ահմադը թուրք էր, մեր ծառան էր: է՛, քանի տարի մեզ
պահան էր ... Հիմի իր իրավունքն առավ ու գնահ. . . .
- Բա էլ չի՞ գալու:
- Չէ՛, բայտ ջան, գնահ. . . .

1908

ԻՄ ԸՆԿԵՐ ՆԵՍՈՆ

I.

Մի խումբ ընկեր երեխաներ էինք: Գյուղացի երեխաներ:

Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դաստիարակություն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք. ի՛նչքան էինք խաղում ու ո՛նց էինք իրար սիրում, ո՛նց էինք իրար սովորել: Սոված ժամանակներս էլ վաղում էինք հացի տաշտից մի կտոր հաց առնում, պանրի կարասիցը մի կտոր պանիր ու էլ ետ շտապում իրար մոտ: Իրիկուններն էլ հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքյաթ պատմում:

Մի ընկեր ունեինք, անունը Նեսո: Ի՛նչքան հեքյաթ գիտեր, Ի՛նչքան հեքյաթ գիտեր, ոչ ծեր ուներ, ոչ տուտը:

Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջ բոլոր նստոտում էինք, հիացած պլլշում Նեսոյի՝ ողբ-վորությունից գեղեցկացած դեմքին: Ու պատմում էր նա Հուրի՛ միերիններից, Չմբուխտ Ղուշից, Լիս ու Մութ աշխարհից...

— Նեսո ջան, Նեսո, հիմի էլ Կուր թագավորի հեքյաթը պատմի, հիմի էլ Թութի Ղուշի հեքյաթը պատմի... հիմի էլ Քաչալի ու Քոսակի հեքյաթը պատմի...»

II.

Ինպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին: Ինձ ուսումնարան տվին, ինձ հետ էլ մի քսան երեսուն երեխա: Ամեն մի երեխի համար տարեկան երեք ուրբի վարձ էին ուզում. էս պատճառով էլ գյուղի երեխաներից շատերը, որոնց ծնողները չէին կարող տարեկան երեք ուրբի տան, մնացին դուրսը: Գուրսը մնացին և իմ խաղընկերների մեծ մասը, նրանց հետ և՛ Նեսոն:

Առաջին անգամն էր, որ մեզ ջոկում էին իրարից և ջոկում

էին ուսումնարանն ու վարժապետը. առաջին անգամն էր, որ մենք դէլի էինք ընկնում, թե մինս ունեւոր ենք, մյուսս աղքատ: Դեռ էս օր էլ ահանջումս է Նեսոյի լացի ձենը, որ իրենց դռանը թափալ գալով դռում էր, թե՛ ես էլ եմ ուզում ուսումնարան գնամ: Եվ դեռ ահանջումս է նրա հոր ձենը, որ կանչում էր.— «Կա ո՛չ, կա ո՛չ, ա՛յ ոչ ու փուչ, ո՞րտեղից տամ... Երեք մանեթ ունենամ՝ կտանեմ հացի կտամ, կբերեմ կուտեք, հրեա մնացել եք սոված նստած. կա ոչ...»:

Նեսոն ու մյուս դուրսը մնացած ընկերներս գալիս էին ուսումնարանի շէմքում հալաքվում՝ մեզ մտիկ անում, (բայց վարժապետը թող չէր անում, էնտեղից քշում էր: Դասամիջոցներին խաղի ժամանակ էլ չէր թողնում մեզ հետ խաղան, ասում էր՝ կողմնակի, օտար երեխաները իրավունք չունեն աշակերտների խաղերին խառնվելու: Եվ նրանք գնում էին ուսումնարանի պատի տակին նստուտում՝ սպասում էին մինչև դասներս վերջանար, որ միասին գնայինք:

Էսպիսով էլ առաջին տարին ուսումնարանում ես մտտեցա նոր ընկերների հետ, Նեսոն ու մյուս դուրսը մնացած ընկերներս էլ տարվա վերջը էլ չէին գալիս ուսումնարանի պատի տակին նստուտում ու սպասում ինձ:

III.

Մի երկու տարի մեր գյուղի ուսումնարանումը կարդալուց ետք հերս ինձ տարավ մեր կողմերի գյուղաքաղաքը, էնտեղի ուսումնարանը տվալ: Էս արդեն բոլորովին ուրիշ աշխարհք էր: Տները սպիտակ, դարձիք տանիքներով, ժողովուրդը զուգված ու մաքուր. ուսումնարանն էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե մի վարժապետ, ինչպես մեր գյուղումն էր, այլ մի քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ, որ նորություն էր ինձ համար ու դարձանալի, սակայն շատ դուրեկան:

Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին: Քաղաքացի աշակերտի շորեր հագա, գեղեցիկ, մաքուր, — ու էսպես կերպարանափոխված էլ տոների արձակուրդին վերադարձա մեր գյուղը: Նեսոն ու հին ընկերներս իմացել էին, թե վերադարձել եմ, առավոտից եկել էին, մեր տան շորս կողմը պտտվում էին ու պատասակերիցը ծիկրակում: Դուրս եկա, գնացի մտտեցա: Չեմ հիշում ինչպես բարեկեցինք. միայն էն է միտս մնացել, որ նրանք էլ առաջվա նման մտերիմ ու համարձակ չէին ինձ հետ: Ամենից առաջ ուշադրություն դարձրին իմ շորերի վրա: Նեսոն մինչև անգամ իմ աշակերտական կարճ բլուզն ակնարկելով մի



Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջ
բոլոր նստատում էին, հիացած պլշում նեսոյի ոգևորւթյունից
գեղեցկացած դեմքին:

արախոսութիւնն արաւ մյուսներին դառնալով ասաւ. — «Կասե-
նաս պոչատ կաշաղակ ըլի. . .»: Նրանք ծիծաղեցին: Ես վշտացա,
բայց բան չասացի: Ապա թե Նեսոն ձեռքը քսեց իմ շորերին,
նրան հետեւեցին մյուսներն ու դարձանք հայտնեցին, թե ինչ
փափուկ են: Էդ օրը առաջին անգամն էր, որ ես էլ ուշք դարձրի
նրանց շորերի վրա ու նկատեցի, թե ինչքան էին կեղտոտ ու
պատրուոված: Եվ առհասարակ մեր ամբողջ դյուղը թվաց աղ-
քատ ու կեղտոտ:

IV.

Երկու տարուց հետո հատեղից էլ հերս ինձ տարաւ մեծ քա-
ղաք, այլեւի մեծ ուսումնարան: Երբ հնտեղից էլ վերադարձա՝
իմ առաջիկա խաղընկերները, որ արդեն մեծ տղերք էին, եկան
բարեկեցին մյուս դյուղացիներին նման ու նրանց հետ էլ հեռու
կանգնեցին: Միայն մի անգամ, խոսակցութեան մեջ, երբ ուրիշ-
ները ինձ հարցնում էին, թե հիշո՞ւմ եմ արդյոք, որ միասին
կարդում էինք, Նեսոն էլ հարցրեց թե՛ «Միտդ ա՞, որ ձեր դուան
դերանների վրա դիշերները հեքյաթ էինք ասում. . .»

Վա՛, ի՞նչպէս չի միտս. . . Միթե կմոռանամ: Էդ իմ մանկու-
թեան ամենալավ հիշողութիւններից միինն է, — պատասխանեցի
ես:

Նեսոն կարծես թե ուրախացաւ, բայց դարձյալ մնաց օտար
ու հեռու:

Իսկ քաղաք վերադառնալու ժամանակ էնպէս պատահեց, որ
Նեսոյի հոր ձին վարձեցինք, որ ես հեծնեմ: Նեսոն էլ պետք է
ձիու հետ ոտով գար: Եվ երբ ճանապարհ ընկանք, ես ձիու վրա,
իսկ Նեսոն իր ցնցոտիներով ու պճեղները դուրս պրծած տրեխ-
ներով ոտով՝ ձիու ետեւից — ինձ սաստիկ ծանր եկաւ: Մի քիչ
անցնելուց հետո հայտնեցի, թե ես ոտով դնալն ալեւի եմ
սիրում քան ձիով, ու ձիուց իջա: Եվ այնուհետեւ կամ միասին
դառնալ էինք գնում, կամ հերթով էինք ձի նստում: Նեսոն սրա
վրա ուրախացաւ, բայց նկատեցի, որ նա իմ արածը վերագրում
է ոչ թե իմ բարեարտութեանն ու ընկերական զգացմունքին, այլ
իմ հիմարութեանը: Ես վշտացա իմ մեջը, բայց այլեւի մեծ վիշ-
տը առաջս էր:

Ճանապարհին մի տեղ իջանք, հանգստացանք ու հաց կե-
րանք: Չմերուկ ուտելու ժամանակ իմ գրպանի դանակը հանեցի
տոյի Նեսոյին, որ ձմերուկը կտրի: Ճամփա ընկնելու ժամանակ
դանակը կորաւ: Նեսոն պնդում էր, թե դանակն ինձ տվաւ գրք-
պանս դրի: Ես թեւ լավ գիտեի, որ ինձ չէր տվել, բայց գրպան-
նեցս ման եկա ու ճանապարհ ընկանք: Ես պարզ նկատեցի, որ

նա իմ դանակը տակով արավ, վերջն էլ ուրիշները տեսել էին ձեռին: Եվ ճանապարհ ընկանք սրտումս մի ծանր վիշտ, որ ոչ թե դանակս եմ կորցնում, այլ մի ուրիշ շատ թանկագին բան, որ Նեսոյի համար անհասկանալի էր ... Իսկ երբ տեղ հասանք ու Նեսոն սկսեց է ետ վերադառնար՝ ես նրա համար մի արխալուղացու առա նվիրեցի, բացի ձիու վարձը, իսկ նա ինձ դիմեց թե՛ — «Ինչ էի չաչի փող չես բաշխում ...»

Ես սաստիկ ամաչեցի ու էդ չաչի փողն էլ տվի: Բայց նրանից հետո, ամեն անգամ, երբ հիշում էի իմ մանկության օրերը և էն երեկոները, գերանների վրա, լուսնյակի տակ նստած մեր խումբը ու Նեսոյին՝ հեքյաթ ասելիս — ամեն անգամ սիրտս լցվում էր ցավով ու անսոսանքով:

V.

— Նեսոն աղքատ է ... Նեսոն աղետ է ... Նեսոն լցված է դյուղական չարքաչ կյանքի դառնություններով ... Նա էլ եթե ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլիներ, դուրս ինձանից էլ շատ ավելի լավը ...

Այժմ Նեսոյին հիշելիս միշտ էսպես եմ մտածում ու արխատում եմ արդարացնեմ, լավացնեմ ու նորից սիրեմ էնպես, ինչպես սիրում էի էն ժամանակ: Ուզում եմ՝ շարունակ էն խաղաղ, աստղալի լուսնյակ գիշերների Նեսոյի պատկերը լինի աչքիս առաջին, մտքիս միջին, բայց չի լինում, էլ չի լինում. իսկույն և եթ առաջ է գալիս մի ուրիշ պատկեր, մի շատ ամբթալի ու ցավալի պատկեր:

Երբ արդեն ուսումս ավարտած, կյանք մտած մարդ էի, մի անգամ էլ մեր դյուղը վերադարձա ու դնացի դյուղամեջ: Գյուղամիջում ժողովուրդը համարված աղմկում էր ու աղաղակում, իսկ մեջտեղը մի հաչից թռկով ամուր կապած ու գլխակոր կանգնած էր Նեսոն:

Իմ հարցին պատասխանեցին, թե՛ գողութուն է արել: Ես միջամտեցի, բայց թողնել տվի նրան: Բայց իմ երևակայության մեջ նա դեռ մնում է թե՛ արևի տակ թռկերով հաչիցը կապած ու գլխակոր, իսկ շուրջն աղմկում է մեր դյուղը:

Մեր դյուղում սովորական բան է և՛ գողութունը, և՛ հաչիցը կապելը, և՛ ծեծելը, բայց էս մինը իմ աչքի առաջից ու մտքի միջից չի հեռանում, ինչպես չի հեռանում և էն մանուկ Նեսոն, լուսնյակ գիշերներին գերանների վրա նստած հեքյաթ ասող Նեսոն, մաքուր ու միամիտ Նեսոն, իմ մանկության ընկեր Նեսոն:

Գ Ր Ա Ձ Ը

1.

Այնտեղ սարերն իրար են հանդիպել, իրենց արանքում մի մեծ ձոր են ստեղծել, որ կոչվում է Մուխը Չոր:

Մուխը Չորը բաժանում է հայերին ու թուրքերին իրարից: Նրա մի կողմը թուրք սարվոչն է իջնում, իր բինեն գարկում, մյուս կողմը՝ հայր:

Բայց նրանց խղիթները զիջերվա մթնով էլ անցնում են այն խոր անդունդը, իրարից ոչխար են գողանում, ձի, կով կամ գոմեշ են քշում: Նրանց հովիվները հանդերում են հասնում ու փետակելով են անում:

Մեկ էլ տեսար մի սարի տեսից տարածվեց մի զիլ, առաձգական ձայն — «Հափար հե՛յ...» Այդ գուժավոր ձայնը ձգվելով տարածվում է լեռներում ու հանկարծ երկու կողմն էլ բինեքում իրարով են անցնում:

2.

Թուրք Ղափըչոզլին բինեն գարկել, ծվար էր արել Մուխը Չորի մի կողմը: Այնտեղից խրոխտ ու սպառնալի նայում էր զիմացը վեր եկած հայերին: Նրա մարդիկը այդ սարերի ամենահազախավոր գողերն էին: Գառառանից փախածները նրա մոտ էին ծածկվում, սարերով անցնող ավազակային խմբերը նրա հարկի տակ էին ապաստան գտնում:

3.

Մի իրիկնադեմ վրանում թինկը տված նա զրույց էր անում իր սովորական հյուրերի հետ: Նրանք հայտնի ավազակներ էին, որ անցնում էին լեռներով:

— Էս դիմացի հայերին լավ է տղերքը տակնուվրա չեն ա-
նում, — իր դարձանքը հայտնեց հյուրերից մի քուրդ:

— Էդքան էլ խեղճ մի դիտենալ դրանց, — պատասխանեց տան-
տերը:

— Դրա՞նց . . .

— Հա՛, դրանց: Դրանց մեջ Չատի անունով մի չորան էր,
իդիթ եմ ասում, որ մենակ էն մի տղի դեմը դուրս դա:

— Փա՛ հա՛, — բացադանչեց վրդոված ավազակը ու չբըխկա-
լով վրա նստեց:

— Ի՞նչ կտաս, դիչերս էնպես անեմ, որ առավոտն էլ ծուխ
չբարձրանա դիմացը:

— Կապուտ ձին փեշքեշ:

— Չեռքդ տուր:

Նրանք ձեռք ձեռքի խփեցին ու դրադ եկան:

4.

Սարսափելի մութն են Մութը Չորի դիչերները:

Մի մթնադիչեր էր. անձրևն էլ անընդհատ տեղում էր միտ-
լար: Քնած էր հայերի բինեն: Երբեմն երբեմն հովիվները այս
կամ այն կողմից խուլ «հեյ-հե՛յ . . .» կանչելով, խմացնում էին,
որ հսկում են դեռ:

Դիչերվա մի ժամանակը մի թմփթըմփոց անցավ վրանների
մոտից: Ծները վեր կացան, վրա տվին, ոչխարը խրտնեց, ձիա-
ները փախան, տավարը ցրվեց: Հովիվները հավար կանչեցին,
հրացանները բացվեցին, և այս բոլոր սարսափներն ու ձայները
խառնվելով մութին, հեղեղին ու ամպի որոտմունքին, հորինե-
ցին մի դժոխային դիչեր:

— Ծունը տարա՛ն, բինեն սլահեցեք, հե՛յ . . . — դուռաց ամ-
գահա հովիվ Չատին:

— Ծունը տարա՛ն . . . — Չայն տվին ամեն կողմից ու սե
սարսափը կալավ բինին: Լեռներում ամեն մարդ լավ է հասկա-
նում, թե ինչ կնշանակի՝ «չունը տարան»:

Գողերը միշտ մի կամ երկու հոգով վազում ընկնում են բի-
նեն, ոչխար, ձի, տավար խրտնացնում, խառնում են իրար:

Ծներն ընկնում են նրանց ետևից: Նրանք էլ շներին հաչեց-
նելով տանում, հեռացնում են բինից: Այնուհետև խառնված,
անշուն բինին ետևից վրա են տալիս նրանց ընկերները և շփոթի
ու խավարի մեջ քշում են անասունները:

Ծուտով հեռեկեց երկրորդ հարձակումը, հարահրոցն ընկավ,
հրացանները բացվեցին, ամեն բան մթնումը խառնվեց իրար ու
իրար խառնված ընկավ դեպի ներքև:

Ահնակիր մթնում ոչինչ չէր երևում: Փայլակի լուսով վայրկենարար բացվում էր ահռելի տեսարանը, բայց մարդու աչքերը որոշ բան չէին կարող նկատել այն թոհ ու բոհի մեջ: Աչքերը չէին կարող նկատել, բայց հրացանների ձայները ցույց էին տալիս, թե որ կողմից են գնում, և հովիվների աղաղակը, որ կանչում էին «Տարա՛ն, տարա՛ն... Ալարաչ հե՛յ...»:

Այդ ձայներն էլ հետզհետե հեռացան, նվազեցին ու էլ ոչինչ չէր լսվում:

Անձրևը միաշար շրջվում էր և ամպը խուլ ճայթում առ որոտում էր հեռու լեռներում:

Ծ.

Լուսադեմին տղերքը վերադարձան: Դեռ հեռվից լսվում էր նրանց ուրախ ուրախ խոսուցն ու ծիծաղները թանձր մշուշի մեջ: Ապրանքն ական ու անվնաս ետ բերին հանձնեցին սարվորին, իրենք հավաքվեցին հովիվ Չատնի վրանը, որ հաց ուտեն:

Նրանք իրենց հետ բերել էին մի քրդի քոլոզ, վահանն ու թուրը:

Իսկույն տարածվեց, թե տղերքը մի քուրդ են սպանել ու հետաքրքրված սարվորները եկան խուճկեցին վրանի ներսն ու դռների արանքում:

Չատնի մայրը սոված հովիվների համար կրակի վրա կերտակուր էր շինում ու հետն էլ իրեն իրեն դուռնդուռում:

Ա. տղա, նա էլ մեր կունենա՞ր ...

Ա. տղա, հիմի նրա մերը ճամփա կպահի՞ր ...

Ա. տղա, կասի, տղես ետ չեկավ ...

Ա. տղա, ճամփա կպահի՞ր՝ ետ չի դնա՞ր...»

Գլուխներն օրորելով նրան ձայնակցում էին մի քանի ուրիշ կանայք: Այն ինչ՝ հովիվները սարվորին պատմում էին, թե բանն ինչպես եղավ:

— Չորս կողմից հավաքվեցինք, տարանք արինք մի ձոր: Էստեղ սրանց տեղը որ նեղացրինք, սրանք ապրանքը թող արին ու ամենքը մի կռան վրա փախան: Մընին քչեցի, տարա քարափին դեմ արի: Որ քարափին դեմ ելավ, մին էլ տեսա ետ դառավ, թուրը հանեց, վրա քչեց թե՛ դլուխդ աղատի, միջիցդ կես եմ անում: Ո՛նց թե միջիցդ կես եմ անում, — դագանակը պտըտեցի, ուսախառը վեր բերի, ա՛ռ հա կտաս...

— Ա՛յ տուր, — բացազանչեցին սարվորները:



— Ես նրա հայրն եմ,— ասավ ծերունին:— Եկել եմ, որ նրա
արինը քեզ հալալ անեմ:

— Երբ խալով փուլեց, — վերջացրեց Չառին իր պատմութիւնը:

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, — քահ քահ խնդացին սարսփոները:

6.

Այս դեպքից մի քանի շաբաթ անց էր կացել: Մի օր շները հաշեցին. դուրս եկան, տեսան մի պառավ քուրդ ձայն էր տալիս բինի ներքեից:

— Ի՞նչ ես ուզում, ա՛ թիրվա:

— Չորան Չառնի վրանն եմ ուզում, — սասլ քուրդը:

Բերին չորան Չառնի վրանը: Չառին հաց դրեց հյուրի առաջ: Դեպից դենից խօսեցին, մինչև հացը կերամ պրծամ: Երբ որ հացը կերամ, պրծամ, Չառին հարցրեց.

— Խեղ բլի, բնչի՞ համար էր եկել թիրվան:

— Կատեղ մի քանի շաբաթ առաջ մի քուրդ են սպանել — խոսեց հյուրը:

— Սպանել են, — պատասխանեց հովիվը:

— Ասում են՝ դու ես սպանել:

— Դրուստ է:

— Ես նրա հայրն եմ, — սասլ ծերունին: — Եկել եմ, որ նրա արջներ քեզ հայտ առնեմ: Դու նրան ճամփին չես սպանել, իր ոչխարումը չես սպանել, իր տանը չես սպանել... Քանի անգամ ասի՝ ա՛յ որդի, ձեռք վեր կալ էտ հարամ ճամփից, հետև կաց էտ բնկերներից. ուրիշները քեզ համար չեն աշխատել... Ինձ չլսեց: Երևի էտպես մահը մտակցել էր, — սասլ քուրդը ու գլուխը քաշ արամ, լռեց:

— Համարտիդ հաստատ կենաս, որ արդարն ես խոսում, — չորս կողմից ձայն տսին սարսփոններն ու իրենք էլ լռեցին:

— Արինը քեզ հայտ, — բացատրանչեց ծերունին, միայն մայրը... դիտես էլի, մայր է... չի հանդատանում... Երբեքն ինձ տվեք, տանեմ, շորերի վրա լաց բլի, իր սիրտը հովացնի, իր կարտան տնի:

Չառին բերեց, ծերունուն հանձնեց արչունտ քոյոզը, վահանն ու թուրը, մի ոչխար էլ առաջն արամ ու շներն անցկացրեց, տարամ ճամփու դցեց:

— Դե՛, մնաս բարով, դավախո — հրաժեշտ տվամ ծերունի քուրդը:

— Գնա՛ս բարով, թիրվա:

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՔ

1898 թվին նոր էր բացվել Թիֆլիսից Ղարս դնացող երկաթուղին: Լոռու գյուղերից մեկում մի իրիկնադեմ Ուհանես բիձու գոան գերանների վրա նստոտած դրույց էինք անում: Ուհանես բիձեն մեզ պատմում էր, թե ինչպես սկսվեց երկաթուղու շինությունը:

«Մի տարի ես ու մեր Սիմոնը ներքի ճալումը ճխարտա էինք կտրում»: Էսպես էր պատմում նա:

«Մին էլ տեսանք մի քանի սխալտակ շլասկատոր մարդիկ ներքևից դուրս եկան ու ջուրնիվեր, ջուրնիվեր դնացին:

— Ասի՛ հե՛ Սիմոն:

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ էստեղ մի բան կա:

— Թե՛ ի՞նչ պըտի ըլիլ, ճամփորդ մարդիկ են, կարելի ա ճամփեն կորցրել են, իրենց համար դնում են:

— Ասի՛ չէ՛, էստեղ մի բան կա, եղևա կիմանա:

Եկանք տեսանք Տերսանց ջաղացի կտերը մի սխալտակ փեսա ա տրնկած:

— Ասի՛ հե՛ Սիմոն:

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ հիմի տեսնում ե՞ս:

— Թե՛ էս ի՞նչ ա որ:

— Ասի՛ հալա դեռ կաց, եղևա կիմանա...

Մրանից մի քանի ժամանակ անցավ — մին էլ տեսնենք կաղեթ եկավ, թե՛ բա՛ երկաթուղու ճամփեն գեսն են տանում...

— Ասի՛ հե՛ Սիմոն:

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ հիմի տեսա՞ր խոսքս որտեղ դուրս եկավ...

— Ա՛յ լեզուդ պասպանձվեր հա՛, — ձայն տվեց էն կողմից որսկան Օսեփը:

— Ա՛յ տղա, ընչի՞ ես էդպես ասում, ի՞նչ մի վնաս բան ա երկաթուղին, — մեջ մտան մի քանի գյուղացի:

— Վնաս չի, բա ի՞նչ ա, եկավ ձորերումը ծրղըրտաց, էլ

պախրա չմնաց, կխտար չմնաց, ձենիցը խրանեցին, փախան կորան:

— Պախրեն ու կխտարը չէ. որ, հալատա ես էլ կորչեմ, — խոսքն առավ մի հովիվ, որ դադանակին հենված կանգնած էր: — Գնում եմ քարի դլխին կանդնում եմ, ձորերին մտիկ եմ անում, որ էն քարափները քանդելիս տեսնում եմ սրտիս ծերը մղկատում ա, ոնց որ թե մարդի երեխեն թշնամու ձեռին քրքրելիս ըլեն ու մարդ կարենա ոչ թե օգնի...

— Չէ՛, շատ բան կըրիչանա, — սրա հետ էլ հառաչեցին մի քանիսը:

Ու սկսվեց վեճը երկաթուղու վրա, թե երկաթուղին օդուտ էր բերելու, թե վնաս:

Էդ վեճի ժամանակ երկաթուղու դժի վրա աշխատող օտարա-կաններից մինը ձորիցը դուրս եկավ ու մոտեցավ մեզ:

— Բարի իրիկուն ձեզ:

— Աստճու բարին, ուստա:

— Ինձ մի չափ ալյուր է հարկավոր, ձեզանից ո՞վ ալյուր կծախի, — դիմեց օտարականը ամենքիս:

— Ո՞րտեղացի ես, ուստա, — հարցրեց Ուհանես բիձեն:

— Օսմանլի հողիցն եմ:

— Ուհանես բիձա, հալա մի հարցրու տեա ո՞ր քաղաքիցն ա, — խնդրեց մի դյուղացի:

— Քու քաղաքի անունն ի՞նչ ա, բարեկամ, — կրկին հարցրեց Ուհանես բիձեն:

— Սըվադ:

— Սըվա՛դ, — երկարացնելով ու խորհրդավոր կրկնեց Ուհանես բիձեն:

— Ի՞նչ ասավ, Ուհանես բիձա:

— Սըվադ:

— Պա՛հ, քու տունը չքանդվի... ծափ տվին ու ծիծաղեցին մի քանի դյուղացի:

— Էնտեղից հստեղ քանի՞ ամսվա ճանապարհ է, — շարունակում էր իր հարցն ու փոքրը Ուհանես բիձեն:

— Երեք ամսվա:

— Պա հո՛... — միաբերան դարձացան ամենքը:

— Համեցեք դարիբ ախպեր, նատի, հաց բերեն, հաց անուշ աբա:

— Չէ՛, շնորհակալ եմ, փռադ եմ, ձեզանից ո՞վ ալյուր կծախի, մի չափ ալյուր տա՛ դնամ:

— Ախչի մի չափ ալյուր դուրս բերեք, — դռնից ձեն տվեց Ուհանես բիձեն. — գլուխ-գլուխ լցրեք:



— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... Չորում սուլում էր երկաթուղին:

Հարսներից մինը մի չափ ալյուր դուրս բերեց, ուղեց դա-
տարիէ մեջը, բայց նա թող չարամ:

— Ի՞նչ արժե...

— Աճա, դեռ ամա տոսրակիդ մեջը:

— Չէ, առաջ մի դինն խմանանք:

— Դեռ ամա, հետո կիմանաս. թե որ թանդ ըլի, դատար-
կելը հեշտ ա:

Ուստեն իր տոսրակը բաց արամ, հարսն ալյուրը մեջը դա-
տարիեց ու դնաց:

— Դե հիմի ի՞նչ տամ, — հարցրեց ուստեն ծոցից քսակը
հանելով:

— Ոչինչ, Ուստա, ոչինչ չի հարկաւոր, քեզ փեշքեշ, մեր
աշխարքումը դարձրից հացի փող չեն առնի, էդ տեսակ աղաթ
չկա... — առամ Ուհանես բիճեն ու շարունակեց իր շիրուխը
ծխելը:

Ուստեն մի քիչ շփոթվեց, չեմ ու չում արամ ու դնաց:

Ուստի դնալուց հետո մի կարճատև լռություն տիրեց, ապա
թե խոսեց մի գյուղացի:

— Էն օրը մինն եկել ա թե՛ մամուն եմ ուզում: Հարսները
մամուն գրին առաջին. կերամ պրծամ, հիմի վեր ա կացել, թե՛
ի՞նչ արժե...

— Ասում եմ՝ ի՞նչը...

— Թե՛ մամունը...

— Ասի՛ ա՛յ մարդ, գլխիցս քաշվի, էդպէս բաներ մի ասի,
թե չէ ոչխարի ելած կաթն էլ կցամաքի...

— Ա՛յ աղա, ի՞նչպէս անենք... Էն լա՛վ ա, որ ո՛յ դա մուֆ-
տա ուտի ու տանի՞... Էս վրա քանիսն են դալի, դիտե՛ս թե չէ...
Էն օրը մընին ես եմ մի խան ալյուր չափել տվել... Էտ ո՛ւր
կերթա, — մեջ բնկամ Ուհանես բիճու փոքր ախպերը:

— Որ դա՛ մին էլ տուր... դլուխը վեր քաշելով հանդարտ
խոսեց Ուհանես բիճեն:

— Օջաղդ չեն կենա, — վաչացին մի քանի ծերեր:

— Աչքս լիս էլի՞. Սրվաղից սկսած ո՛յ դա՛ չափի տուր. կասես
ես նրանց համար եմ աշխատել... Ո՛յ դալիս ա՛ բարով, հազար
բարի. բան ա ուզում փողը բերի՛ տանի...

Ու սկսեցին վիճել: Ուհանես բիճեն էլ աաքացամ, աղմուկը
մեծացամ:

— Ո՛ւ ո՛ւ ո՛ւ... Չորերում սուլում էր երկաթուղին:

Նոր էր մտել նա մեր ձորերը:

Մ Ե Ր Ո Ն Ք

1.

ԳԱԲՈ ԲԻԶՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ես ալ Գարո բիճեն անցնում էինք Լուսու ձորով:

— Հե՛յ, տիրացու — ձայն տվաւ նա:

— Համմե:

— Հրամանքդ շատ: Ես տեսնում եմ, որ էս մեր նոր ուսում առածները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ կասես:

— Ինչո՞ւ, Գարո բիճա:

— Նրա համար, որ հենց դիտեն՝ ամեն բան իրենք են հասկանում, իրենցից առաջ էլ ոչ մարդիկ են եղել, ոչ բան են հասկացել: Մին էլ կտեսնես բռնեցին ու գլխիդ դելի ավետարան կարդացին — հա՛ էս ճանճ պահի՛ր, էս արբեչումի ճիճու պահի՛ր, էսպես մածուն շինի՛ր, էսպես ցանի՛ր, էսպես հնձի՛ր... Տո, հեր օրհնած, մի առաջ հարցրո՛ւ, տես՝ էդ բաները դրանք էլ միտք են արել թե չէ, նրանից ետը՝ թեկուղ ուշունց աուր:

— Ետ մի՞տք եք արել որ, Գարո բիճա:

— Ա՛խպեր, այ ես հիմի՛ օրինակի համար՝ մինն ասեմ, դու տես՝ մենք էլ հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում թե՞ չէ: Մի աշունք մեր Դավոն դնաց քաղաքը խող ծախելու: Մի ճանանչ մարդ արբեչումի ճիճվի սերմ էր տվել թե՛ տարեք ձեր տեղը առաջ բերեք: Չամփա պահեցինք մինչև դարունքը բաց եղավ: Գարունքը որ բաց ելավ, ոնց որ խրատ էր տվել՝ էս ճիճվի սերմը բերինք մեր խիզանի ծոցում դրինք, որ տաքանան, դուրս գան: Դուրս եկան ասեղի ծերի չափ մանր սև դադեր: Տիրացո՛ւ:

— Համմե՛:

— Էդ ձեր ուսումնականները թե դիտեն — արբեչումի ճիճուն ի՞նչ կուտի:

— Թ՛թան տերև:



— եղ ձեր սպասնակաճները թե գիտեմ, — ապրեշումի երևումն ի՞նչ կուտի:

— Ապրե՛ս, գրուստ ա: Գնացի ձորիցը մի շալակ թթան տերև
 բերի, կապեցի մեծ տան ամբարի դախն ու ճիճուն վրեն ածի:
 Ինչքան մարդ եկավ նայելու, ոչ-ոքի տուն չթողինք՝ որ աչքով
 չտան, ասինք թող մի տեսնենք ինչ ա դուրս դալի: Ա՛յ ադա,
 էդ անտեր ճիճուները մի քանի օր կացան ու կոտորվեցին: Հիմի
 թե ասենք նրանից էր, որ գոմչի ձաղը շատ էր մտա կապած,
 սանասակ էր տալիս, թե նրանից էր, որ հավերը տուն էին թա-
 փում՝ կացահարում. դե ո՞նց անենք: Հո չէի՞նք կարող հավերը
 կոտորել կամ ձաղն սպանել: Թե ասենք անձրևիցն էր, որ երդի-
 կովը ներս էր թափվում, մին էլ մարդ միտք ա անում, թե բա
 քաղարումն անձրև չի դալի՞. . . Մի խոսքով՝ բան դուրս չեկավ:
 Տեսանք, որ մեր երկրումը արբեշումի ճիճուն անում չի, բան չի
 դառնում: Ին՛ դարմանալու ի՞նչ կա որ. էնպես երկիր կա՛ հավք
 չի ապրում, էնպես երկիր կա՛ ցորեն չի դուրս դալի. սմեն աշ-
 խարհք մի տեսակ բնություն ունի. բայց էս մեր նոր ուսում
 առածները էսքանն էլ չեն հասկանում:

. 1899

2.

ՔԵՌԻ ԽԵՉԱՆԸ

- Բարի լիս ձեզ:
- Ա՛յ, բա՛րով, բա՛րով, քեռի Սեչան: Ա՛ղջի, չա՛յ բերեք,
 հա՛յ բերեք, ա՛րադ բերեք քեռի Սեչանի համար: Ի՛, խեթ ընի,
 քեռի Սեչան, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, որ դու քաղաք ես եկել:
 — Ինչ պետք է պատահի. ձեր կարոտն էլինք քաշում: Ասի՛
 մեռնիլ կա, ապրիլ կա, մի դնանք տեսնենք:
 — Ծնորհակալ ենք, շնորհակալ ենք, քեռի Սեչան:
 Քեռի Սեչանը դեսից-դենից խոսեղով թեյ խմեց, հաց կերավ,
 վերջը լուց ու սկսեց չիրուխ քաշել:
 Մին էլ չիրուխը բերնից հանեց թե՛
 — Բա էս ո՞նց պրտի ըլի:
 — Ի՞նչը, քեռի Սեչան:
 — Էս, որ երեսին սարլաթ են տանում:
 — Չգիտեմ. . . ես ի՞նչ կարող եմ անել. . .
 — Էլ ինչը ո՞րն ա, հրեն քեռեկինդ նստած բաց ու բլում:
 — Ին՛ ասա, ինչ որ կարող եմ անել, — պատրաստ եմ:
 — Ասում եմ՝ դնանք մի մեարիկեն հանենք, տեսնենք, ինչ
 ենք անում:
 — Լա՛վ համեցեք դնանք:
 Գնացինք կոնսինստոր:

Դիմանապահին խնդրեցի՝ քեռի Սեչանի ցույց տված թիա-
կանի մետրիկական մատյանները հանեց, ման եկանք, քրքրե-
ցինք, քեռի Սեչանի տղեն չկար:

— Էդ ոնց ա, ախպեր:

— Դե չկա էլի, քեռի Սեչան:

— Հլա մի քանի տարի էլ ցած մտիկ արեք, կարելի՛ ա սխալ-
վել ենք:

— Նոր մատյաններ բերինք, ման եկանք, նրանց մեջ էլ չկար:

— Մենք սխալվել ենք . . . անպատճառ սխալվել ենք էլի, —
կրկին խոսեց քեռի Սեչանը: Երեխեն իմ հաշվով մեծ պետք է
լլի: Մըթամ պետք է ասեի բարձր մտիկ արեք, ցած եմ ասել:

— Լավ, քեռի Սեչան, բարձր էլ մտիկ կանենք:

Նոր մատյաններ բերինք, նորից ման եկանք: Գարձյալ չկար:

— Չկա, քահանեն դրել չի:

— Բա էս ո՞նց պրտի լլի:

— Դե որ չկա՝ ի՞նչ անենք . . . Գնա՛նք քեռի Սեչան:

— Գնալով ո՞նց կըլի . . . հրեն քեռեկինդ նստած լաց ա ըլում:

— Դե ինչ անենք, որ չկա:

Գուրս եկանք: Մի հիսուն քայլ դնացինք, քեռի Սեչանը
կանգնեց:

— Կա՛ց հլա:

— Ի՞նչ կա, քեռի Սեչան:

— Մըթամ էս ո՞ւր եկանք, ուր ենք գնում:

— Մեր տունն ենք գնում, էլի:

— Ետո էդ էլավ, որ . . .

— Բա ի՞նչ անենք:

— Ախր հնտեղից հատեղ քու անունը տվել եմ եկել, հիմի
որ դնամ՝ ի՞նչ խարար տանեմ:

— Դե ի՞նչ անեմ, քեռի Սեչան, մատյաններն էն էին, էնքան
տարի տեսանք, տակն ու վրա արինք—չկա:

— Ոնց թե չկա. էն ոնց ա ամենի տղեն էլ կա, հենց իմը
չկա . . .

— Դե որ էդպես է, ի՞նչ անենք:

Քեռի Սեչանը մինչև տուն բան չխոսեց:

— Հը՞, ինչ արիք, — հարցրեց կինս:

— Դեռ հալա տեսնենք, — պատասխանեց քեռի Սեչանը:

— Էլ ի՞նչ տեսնենք, մատյանումը գրած չէ, վերջացավ
դնաց, — մեջ մտա ես:

Քեռի Սեչանը տնքաց:

— Վերջացավ, վերջացավ, ես էլ ինչ ճամփով եկել եմ էն
ճամփովն էլ ետ կերթամ մեր տունը, — վճռեց ու վշտացած
նստեց, սկսեց չիբիսին դռ տալ:

Ճաշի ժամանակն եկավ: Լուռ նստած ճաշում էինք. հան-
կարծ քեռի Սեչանը ճաշն ընդհատեց ու ինձ դիմեց.

— Բաս ես որ հիմի դնամ՝ քեռեկնկանդ ի՞նչ ասեմ:

— Ընչի՞ համար:

— Էս մետրիկականի:

— Վա՛հ, չկա, չկա, քեռի Սեչան. տերտերը դրել էի, չկա:

— Է՛, դե ասում ես, էլի:

— Ի՞նչպես թե ասում ես, էլի, քեզ ասում են—չկա:

Քեռի Սեչանը դարձյալ տնքաց ու չիբուխը սարքեց:

Ճաշից հետո մտա իմ առանձնասենյակը, որ հանդատանում:

Մտածում էի, թե ինչ տեսակ մարդիկ են մեր գյուղացիք...

Մին էլ տե՛սնեմ՝ անբա մտավ քեռի Սեչանը:

— Գնում ե՞ս:

— Հա՛:

— Բա էս ներս ժամանակ ա՛:

— Բա՛ ինչ անեմ, քեռի Սեչան:

— Ախր ես եկա հատեղ մնացի, բա ի՞նչ ես անում:

— Ի՞նչ անեմ քեռի Սեչան:

— Էս մետրիկի համար բա ի՞նչ ես ասում:

— Վա՛հ, դարձանալի մարդ ես, ա՛յ մարդ, քեզ հայերեն
ասում են՝ չկա՛, չկա՛, քեռի Սեչան:

— Դե լավ, լավ, էլ ինչ ես նեղանում, չկա ես էլ կդնամ մեր
տունը: Մնաք բարով, — ու քրթմնջալով դուրս գնաց:

— Գնաս բարով. դե ինչ անեմ, որ չկա:

Վերկացա, տեսնեմ քեռի Սեչանը պատշգամբում նստած չի-
բուխ է քաշում: Գլխարկս վերցրի, որ տանիցը դուրս դամ:

— Էդ ո՞ւր ես գնում, — ետևիցս կանչեց քեռի Սեչանը, —
բա ի՞նչ ես ասում...

— Բան չեմ ասում:

— Գնո՞ւմ ես...

— Հա՛:

— Էլ մետրիկեն չես տեսնի՞ր...

— Չէ՛, չեմ կարող:

Էս պատմությունից հետո քեռի Սեչանը դնացել էր գյու-
ղումը պատմել, թե իր տեղը նեղ էր, եկել էր քաղաք՝ ինձ
խնդրել, որ օգնեմ, իսկ ես ասել էի՝ չեմ կարող, ու ոչ նրա խոս-
քին էլին ականջ դրել, ոչ երեսին էին մտիկ արել:

3.

ՆԵՍՈՑԻ ԲԱՐՍԱՅԱՂՆԻՍԸ

Կիրակոսը մրսել էր, անկողին էր ընկել, տանջվում էր տա-
քության մեջ: Հարևանները հիվանդի շուրջը հալաքված օղեն
վիքը դրույց էին անում, չիբուխ քաշում:

- Տղէ՛ք, սա որ քրտնի ոչ, բան չի դառնալ, եկեք սրան մի քարաբաղնիս անենք, — ծխի միջից առաջարկեց Նեսո բիձեն:
- Հա, էդ խելքս կտրեց, — հալանություն տվեց մի ուրիշը:
- Իրան էլ ուրիշ ճար չկա, — ձեն տվին էս ու էն կողմից:
- Կիրակո՛ս . . .

— Հը՛՛:

- Ասում ենք քարաբաղնիս անենք, ի՞նչ էս ասում:
- Վախենում եմ . . . չդիմանամ . . .
- Տո՛, կդիմանաս, երեսա հո չե՛ս:
- Դե . . . դուք դիտեք . . . ձեզ մատաղ:

— Ա՛ղջի, պղինձը ջուր լցրեք բերեք. մի փեշ էլ քար բերեք կրակն ածենք տաքանան:

Պղինձը դրին կրակին: Քարերն ածին կրակի մեջ ու Նասո տեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հողի են աղատվել քարաբաղնիսով. Մատնանց Դանելը, Մաթոսանց Մինասը, Ծատուրանց Ստեփանը, Մաչկախորանց Միկոն — մինչև որ ջուրն եփ եկավ, քարերն էլ կարմրեցին:

- Դե ժամանակն ա, վե՛ր կացեք:
- Տղէ՛ք վախենում եմ . . . — կանչեց հիվանդը:
- Դու սո՛ւս կաց: Աղջի, մի երկու հաստ լեհեր բերեք, մի չորս ու հինգ ուժով տղեք էլ եկեք հստեղ:

Շորերով փաթաթված եռման ջրով լիքը պղինձն ու հիվանդին դրին խրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մեջ. քարերը թշշացին, ամպի նման գոլորշին սկսեց բարձրանալ, շտապով վերմակները ծածկեցին ու չորս կողմից մրեն նստատեցին:

- Վա՛յ, խեղդվեցի՛, — խուլ դռում էր հիվանդը:
- Սեղդվի՛լ չես . . . տղերք պլնդ նստեցեք: Գլուխն ու տաները ամուր պահեցեք:

Հիվանդն աղաղակում էր, օրհասական ջանքեր էր անում շարժվելու, բայց հինգ-վեց ածդահա տղամարդ մրեն նստած չէին թողնում:

- Ո՛ւր ես գնում, — կանչում էին էս ու էն կողմից, վերևից սեղմում ու հրհռում:
- Հիմի թե չքրտնի՛:

Ու Նեսո բիձեն, հիվանդի մրեն նստած, չիբուխը բերանին շարունակում էր իր պատմությունը:

- Մի տարի էս մեր Արզարն էլ հսպես մրսել էր: Ղանթափու ծաղիկ բերին, չայ շինեցին խմացրին, պրաչոկ բերին, ջուր արին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի տղերք, բերեք ես դրան մի քարաբաղնիս անեմ: Թե՛ գե դու դիտես: Բերի մի թե՛ կրակ արի, Գարան տատի պռունկը կտորած պղինձը ջուր լցրի մրեն դրի, քար հալաքեցի ածի չեղ

Ղը: Չուրն եւի եկամ, քարը կարմրեց: Սա թե՛ վախենում եմ:
Ախր նա էլ սրա նման մի լեղատաաաա օքմին ա:

— Աղա ընչի՞ ես ասում, Արդարը հո սրտա մարդ ա:

Վա՛յ է՛, նրա սրտառը ո՞րն ա: Մի աշունք ես մի արջի բուն
դտա: Եկա ասի՛ Արդար, արջի բուն եմ դուել, արի գնանք յարջին
բնիցը հանենք: Գնացինք: Ես մի՛ ձող վեր կալա էս արջի բունը
խրխրթորեցի: Մին էլ հանկարծ էն անտեր արջը դուրս եկամ ու
ինձ կալամ: Արդար, քոմադ հա քոմադ: Ո՞վ կտա Արդար—մին էլ
տեսնեմ հրեն փախած գնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պրծա
եկա տուն: Ասում եմ, աղա, դու էս ի՞նչ արիք: Թե՛ եկա տուն,
որ թվանք բերեմ: Սուտ: Վախիցը փախամ:

— Էն էի ասում — հիմի սա կանգնել ա, թե Նեստ ջան վախե-
նում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ:

Ականջ չդրինք, բերինք կեծացած քարերը Եփման Չուրր
յցրինք ու հենց էնպես բուղը վեր ըլելով սրա հետ կոխեցինք տեղի
տակը. — վա՛յ, մեռա հա՛, մեռա: Լսողն ո՞վ ա: Վրեն նստո-
տեցինք: Ես եմ, էս մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գարոն ա,
Արուժն ա: Հիմի սա տակիցը գոռում ա, ո՞նց ա դոռում...
էնքան դոռաց մինչև դինջացամ: Բայ արի՛նք, տեսանք Չուր ա
կարել: Էն էր ու էն, լամպեցամ, տեղիցը վեր կանգնեց ողջ առողջ
մարդ:

Նեստ բիձու պատմութունը որ վերջացամ, վեր կացան վեր-
մակները ես քաշեցին: Գոլորչին օդեն բունեց: Բայց կիրակոսը...

— Կի՛րակոս:

Ժած չի գալի:

— Կի՛րակոս...

Պատասխան չի տալի:


— Կիրակո՛ս. — ձեն տվին, շարժեցին, քաշքշեցին, Կիրակոս
չկա:

— Ա՛յ տղա, էս ո՞նց էլամ, — մոլորված արտասանեց Նեստ:
Մյուսները լուռ էին:

— Վա՛յ, տունս քանդվե՛ց... ծղրտաց Կիրակոսի կինը:
Իրար հրհրելով տղերքը դուրս եկան կտուրը: Ու մինչդեռ ներքև
Կիրակոսի կինը սուղ էր անում, կտերը արևում նստոտած ար-
ղերքը պատմում էին, թե քանի-քանի հողի են խեղդվել քարա-
բաղնիսից. Հանրսանց Հարոնը, Մելքոնանց Վանեսը, Հախվեր-
դոնց Ադեն, Եփմալանց Եամիրը... ո՞ր մինն ասես:

— Տո՛ղե ճակատի դիր ա էլի, հո նրանց էլ Նեստն չի խեղդել:

Նեստն լուռ, գլուխը կախ արած լուռ էր ու չիրուխ էր քա-
շում:



Ու նեստ բիձեն, հիվանդի վրեն նստած, շիրուխը բերանին շարունակում էր
իր պատմությունը:

ԵՂՋԵՐՈՒՆ

Մի սեպտեմբերի մեր գյուղացի որսկան Օսեփը ինձ դիչերա-
կաց որսի տարավ Եղնուտի կիրճը: Գիչերներն էդ կիրճով եղջե-
րուններն իջնում են ձորերն ու հովիտներն, արածում են, արշա-
լուսից առաջ շուր են խմում ու էլ ետ իրենց «պնդոցն» են տալի:

Գնում էինք դիչերը մնանք բոստանչի Օվակիմի դափումը,
որ լուսադեմին հասնենք որսատեղը պահելու:

Ես էի, որսկան Օսեփն էր ու մեր գյուղացի մի տղա, որ
Օսեփի շալակտարն էր:

Մենք գնում էինք էն դաժան հրճվանքով, որով միայն որսի
են գնում: Ճամփին որսից էինք խոսում:

— Որսը բախտի բան է, — ասում էր Օսեփը: — Մին էլ տեսար
երևույթք ելավ ու քամի դառավ կորավ: Անսովոր մարդը նրան
հեշտ չի նկատիլ. կշիտթվի, կդողդողա, կիախցնի: Աչքդ առնե-
լուն պես պետք է թփանքդ բացվի, թե չէ որ ուղեցիր նշան
դնես, մինչև աչքդ ձայես, նա սարն անց կացավ:

— Հապա դուք ինչպե՞ս եք որսի ման դալի, ուստա Օսեփ:

— Լավ որսկանը ման չի դալ, նա որսը կպահի, — պատմում
էր որսկանը: — Գիտի ո՞ր ժամանակին, ի՞նչ տեղ որսը ժաժ կդա
կդնա էն տեղը կպահի: Թե ման էլ դա, քիչ, էն էլ էնպես ման
կդա, որ որսն իր քամին չառնի, թե չէ որսն էնպես սուր հոտա-
ուռթյուն ունի, որ թե քու քամին (հոտը) նրա վրա էլավ
պրծար, որտեղ որ է հոտը առավ կորավ:

Էսպես խոսելով իրիկունը հասանք բոստանչի Օվակիմի դա-
փին: Ծերունի բոստանչին փետ էր հավաքել, կրակը վառել ու
կողքին թինկը տվել:

— Բարի իրիկուն, Օվակիմ բիճա:

— Ա՛յ ասածու բարին ձեզ, դուք բարով եկաք. այ տղա.
էդ ինչ լավ դոնախներ եք: Ես հենց մենակ միտք էի անում, թե
մի դրիցընկեր ըլի... էս հենց աստո՞ժ հասցրեց ձեզ... — ուրա-
խացած դողողում էր Օվակիմ բիճեն:

— Դու էն ասա՛ որս ա ժաժ դալի՞ թե չէ Օվակիմ բիճա, —
անհամբեր հարց տվավ որսկանը:



Նա դուրս եկավ մի խաղաղ հայաբնակչամբ, վեհ ու շքեղ...

մոր նման, թվանքի ձեռք իր երեխի վրա լսած մոր նման: Եկավ տեսավ իր ձուտը հրես անշունչ, արնակոլով մի ծառի տակ փրո- ված: Տղեք, դուռնչը մեկնել ա, ոնց ա տխուր մղղացնում, ոնց ա վերքը լիզում... Թվանքը վեր կալա, էդտեղից քաշվեցի, եկա տուն: Եկա տուն. եկա տեսա երեխեն դժար ա, հոգու հեա կռիվսն ա տալի, տնքում ա: Տղեք, էն օրը չի, էն օրվա աս- տոծն ա. էնպես էն պախրի ձուտի նման ա տնքում, որ աչքս խուլի եմ անում, հենց իմանում եմ դեռ էն թիփի կողքին եմ կանգնած: Վերջապես, երեխեն մեռավ. հիմի մերը ընկել ա վրեն — բառանչում ա... Ստում եմ, փառքդ շատ ըլի աստոծ, ի՞նչ ա մեր ու էն սարի պախրի զանազանությունը — ոչինչ... ամենի սիրտն էլ սիրտ ա, ամենի ցավն էլ ցավ...:

Օվակիմ բիձու տխուր պատմության տպավորության տակ մի առ ժամանակ լուռ էինք:

— Օվակիմ բիձա, չէ որ ասում են պախրեն էլ տեր ունի, — խոսեց շալախտար Ղազարը:

— Ունի բաս, պախրեն մեծ տեր ունի:

— Ետնա էդ դրուտտ բան ա՞:

— Դրուտտ ա, բա՛ս: Որսկան Փիրումն ինքը գլուխ որսկան էր ու նրա գնդակը իր օրումը դետին չէր ընկած: Մի անգամ մի պախրա ա վիրավորվում: Պախրեն փախչում ա, սա ընկնում ա ետևիցը քչում ա տանում հասցնում Չորավոր կաղնրքու տակը: Էստեղ Չորավոր կաղնրքու տակին պախրեն չոքում ա. պախրեն չոքում ա — որսկան Փիրումը թվանքն երեսն ա կալնում: Հենց էս տժժան բոպեին Չորավոր կաղնրքուց մի դուռն ա բացվում, մի սիրուն հարսն ա դուրս գալի. էս սիրուն հարսը դուրս ա գալի որսկանի դեմը ծղրտում.

— Ի՞նչ ես հարածում իմ անմեղին, անկրավ մարդ, ի՞նչ ա արել քեզ: Ադա՛հ, ո՛չ կշտանաս դու, որ չես կշտանում լիքն աշխարքում: Թվանքդ արնով լցվի, գնդակդ խմոր դառնա, չո- քանա էդ թվանքը բռնող կուռը...:

Միայն որսկան Փիրումը խելոք մարդ էր — գլխի ա ընկնում, որ էս որսի տերն ա, ձեռաց թվանքը դցում ա մի ծառի ճյուղքի. անխճեղուն պես ծառի ճյուղքը տեղն ու տեղը չորանում ա:

— Օվակիմ բիձա, ուրեմն էդ ա, որ ասում են որսկանու- թյունը անխճած ա:

— Անխճած ա, բաս, մին որսկանությունը, մին էլ ձկնորսու- թյունը, երկուսն էլ անխճած են: Հնուց գրած նդովք ա, որ որս- կանի ու ձկնորսի փորը կշտանա ոչ: Որսկանի վրա Գարամն էլ նդովք գրեց: Երբ էրվելով իր Ասլու ետևից ման էր գալի՞ մի վիրավորված պախրա տեսավ: Տեսավ՝ անասունը մղկատալով շունչը տալիս ա, հորթն էլ մոլորած մնացել ա կողքին կանգ- նած, էստեղ սաղն առավ ու մի խաղ ասավ:

Մենք խնդրեցինք Օվակիմ բիձուն, որ էդ խաղն ասի մեզ
համար, ու ծեր բոստանչին իր պառավ ձենով, խարույկի առաջ
երդում եր մութը ձորում:

Հե՛յ պարոններ, տեսա կանանչ դարունքին՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա.
Սիրուն հորթը մոլոր կանգնած իր կողքին՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա:

Գրնդակն առած գրնում էր փուչ աշխարհքից,
Գանդատվելով մարդու անգութ արարքից,
Արյուն տալով, մըղկըտալով իր վերքից
էս սարերում լաց էր լինում մի պախրա:

Աստված սիրող՝ որսին թվանք չըբունի,
Երկինք սիրող՝ որսի միսը թող չաունի.
Դարդոտ Բյարամ տեսավ ծովում արյունի՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա:

Ամենքը քնեցին. ես մնացի դարթուն: Գիշերն էս տեսակ
տեղերում անսովոր մարդը չի կարողանում քնել, հազար ու մի
ձեն է լսում հազար ու մի բան է երևակայում:

էն անշուշտ գիշերվա հովն էր, որ շարժում էր սիմֆոնիոր-
ները, բայց ինձ թվում էր, թե Օվակիմ բիձու ասած պախրեն
էր բոստանը մտել: Գիշերվա մթության մեջ հեռվում սև կեր-
պարանքներ էին երևում ու կարծես շարժվում էին:

Ու անքուն էի ես:

Գիշերվա մի ժամին դուրս եկա դափի դուռը: Պարզ աշնա-
նային գիշեր էր: Չոր ցուրտը սեղմում էր: Չորերը խուլ թշշում
էին: Նրանք էլ ասեա քնել էին, Օվակիմ բիձու նման փշշացնում
էին խոր ու հանգիստ:

Բայց քարվանդոան աստղը արդեն դուրս էր եկել. մեր
ճամփա ընկնելու ժամանակն էր: Ես վեր կացրի իմ ընկերներին:
Նրանք շտապով հազան իրենց արեխները ու վեր կացանք դեպի
Եղնուտի կիրճը ...

Արշալույսից առաջ մենք դարան էինք մտած Եղնուտի կիր-
ճում: Ես իմ դերքից պահում էի առաջիս ընկած բացատը: Ին-
ժացս կանգնած էր խոր ու անթափանցելի մութն անտառը:

Հետզհետե գիշերվա խավարն սկսեց նստրանալ, ժայռերը խո-
ժոռ, քնաթաթախ դուրս նայեցին աղջամուղջի միջից: Երկինքն
սկսեց գունատվել ու պարզվել: Ապա երևաց եղջերուն — լուս-
աստղը: Վեր կացավ վաղորդյան զեփյուռը: Ծաղիկները շար-
ժեցին իրենց գլխիկները, խոտերը դողդողացին, տերևները
չրչացին: Անտառն սկսեց զարթնել: Մոտակա թփից մի ծխա-
ճկաց, մի ուրիշը, մյուս թփից, մեկն էլ հեռվից...

Ես աննկատելի դուրս էի եկել իմ թաքստից ու դմայլած դի-
տում էի շուրջս — բնությունը, էն սրբազան ժամին, երբ ծագում
է առաջին լույսը:

Հանկարծ մի ձայն... չորացած ճյուղ կտորվեց մտախի աճ-
տառում: Նայում եմ էն կողմը: Անտառը տակավին մութն է:
Աչքս չի որոշում, թե ինչ կա էնտեղ, միայն պարզ լսում եմ
զգուշը ռանածայնը, որ խաչամը կոխելով առաջ է գալիս — խը՛շտ,
խը՛շտ, խը՛շտ... բան չի երևում, բայց դարձյալ խը՛շտ, խը՛շտ,
խը՛շտ, մոտենում է ավելի ու ավելի... Եվ, ահա, դուրս
եկավ...

Ես առաջին անգամն էի տեսնում եղջերուն ազատ բնության
մեջ: Նա դուրս եկավ մի խաղաղ հպարտությամբ, վեհ ու չք-
նաղ, ինչպես բնության էն ամեն գեղեցկությունների տերն ու
թաղավորը: Կիսովին, դեռ անտառի մթության մեջ կանդնեց,
թուխ դունչը դրավ գեանին, ապա թե գլուխը բարձրացրեց,
վայրենի շնորհքով ոլորեց երկայն վիզն ու նայեց իմ կողմը:

Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ կյանքում:

Ես շիտթվեցի, ամաչեցի, ուղեցի թաքցնել հրացանս...
Շարժվեցի թե չէ, նա շտապով ետ թեքեց իր կարապի վիզը. վի-
զը ետ թեքելուն պես հարևան դիրքից որոտաց որսկան Օսեփի
հրացանը: Հրացանի ձայնից անտառը որոտաց ու սկսեց ճրճալ:
էն եղջերուն էր փախչում:

— Հա՛յ քո տունը չքանդվի, — ինձ հանդիմանելով դուրս
թռավ որսկանն ու վազեց դեպի մոտիկ բլուրը, տեսնի որ կողմից
կերևա փախած օրսը: Առավոտը բացվում էր, և էնքան լույս էր,
որ կարողացանք կանաչ խոտերի վրա գտնել թարմ արյան
հետքը:

Վերավորված էր եղջերուն: Արյան հետքը բռնեցինք ու գնա-
ցինք օրոնելու:

— Էսքան որ արյուն է տվել, ինչքան ուզում է գնա՛ մերն
է, — հայտնեց որսկան Օսեփը:

Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտառում: Նա ընկած
տեղից իր երկայն վիզը մեկնեց մեզ վրա: Ես տեսա՛ ինչպես չէր

կարողանում գլուխը պահի, շարժում էր անդադար ու նայում էր մեզ իր պղտոր, շրջկլած, անորոշ հայացքով: Հանկարծ կարծես գլխի ընկավ, աշխատեց վեր կենա, ծնկները վեր բարձրացրեց ու կրկին ճըղփալով ընկավ իր արյան մեջ մի ծանր, անզոր թառանչով:

Որսկանը վրա վազեց... Ես ուղեցի մի բան ասեմ, ամաչեցի... նա բռնեց եղջերվի գլուխը, ոլորեց գեղեցիկ վիզը... Ես կրկին ուղեցի մեջ մտնեմ... դարձյալ սիրտ չարի... Եվ ահա դաշույնը փայլատակեց:

Ես երեսս շրջեցի, իբրև թե սարերին եմ նայում: Ետևից մի խուլ տնքոց լսեցի... ու, չգիտեմ ինչու, սկսեցի մտածել կյանքի ու մահվան մասին, և էնպե՛ս տգեղ էր թվում ինձ կյանքը...

1909

Մ Ա Յ Ր Ը

Մի գարնան իրիկուն դռանը նստած զրույց էինք անում, երբ այս դեպքը պատահեց: Էս դեպքից հետո ես չեմ մոռանում էն գարնան իրիկունը:

Ծիծեռնակը բուն էր շինել մեր սրահի օձորքում: Ամեն տարի աշնանը դնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի օձորքին:

Ե՛վ գարունն էր բացվում և՛ մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր զվարթ ճիչով հայտնվում էր մեր գյուղում ու մեր կառուրի տակ:

Ե՛վ ի՛նչ քաղցր էր, երբ առավոտները նա ծլվլում էր մեր երգիկին, կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ շարվում էին մի երկար ձողի վրա ու «կարդում իրիկնաժամը»:

Ե՛վ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բունը: Չու էր ածել, ձուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում, կերակուր էր բերում իր ձուտերին:

Էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկավ, կացումը կերակուր բերավ ձուտերի համար: Ձուտերը ձվձվալով բնից դուրս հանեցին դեղին կառուցները:

Էդ ժամանակ, ինչպես եղավ, նրանցից մինը, գուցե ամենից անզգույշ կամ ամենից սովածը, շտապեց, ավելի դուրս ձգվեց բնից ու ընկավ ներքև:

Մայրը ճչաց ու ցած թռավ ձուտի ետևից: Բայց հենց էդ վայրկյանին, որտեղից որ էր, դուրս պրծավ մեր կատուն, — վեր թոցրեց փոքրիկ ձուտը:

— Փի՛շտ, փի՛շտ, — վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկավ կատվի ետևից՝ նրա շուրջը թրթռալով ու կացահարելով, բայց չեղավ: Կատունն փախավ մտավ ամբարի տակը: Ե՛վ այս ամենն այնպես արագ կատարվեց, որ անկարելի էր մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտրտում էր ամբարի շուրջը, իսկ մենք, երեսաներս, մի-մի փայտ առած պտրտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկավ ու փախավ դեպի մարագը, դունչը լիզելով:



Մին էլ տեսանք, հանկարծ ծիծեռնակը ցած ընկավ մի բարի կտորի նման:

Ծիծեռնակը դատարկ կատվին որ տեսավ, մի զիւ ծղըրտաց
ու թռավ, իջավ դիմացի ծառի ճյուղին: Այնտեղ լուռ վեր եկավ:
Մին էլ տեսանք, հանկարծ ցած ընկավ մի քարի կտորի նման:
Վազեցինք, տեսանք՝ մեռած ընկած է ծառի տակին:

Մի դարնան իրիկուն էր, որ այս դեպքը պատահեց: Շատ
տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այն դարնան իրիկու-
նը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ
մայր է ու սիրան էլ սիրտ է, ինչպես մերը:

Գ Ե Լ Ը

1.

Սորն աշունքին Լոռու ասրերով անց կենալիս մի գյուղում մուժը վրա հասավ: Հյուր ընկա Անդրիաս քեռու տանը, որ մի հին ու փորձված հովիվ էր:

Սարերում սովորություն կա, որ տեսան մեկի տունը հյուր եկավ՝ հարևանները կհավաքվեն եկվորի գլխին, կհետաքրքրվեն, հարց ու փորձ կանեն՝ իմանան ի՞նչ կա, ի՞նչ չըկա աշխարհքում: Եվ ահա հետզհետե գյուղացիք հավաքվեցին Անդրիաս քեռու օթախը:

Տան տերը բուխարին թեժ արավ, մենք էլ, ով ինչպես ուզեց, տեղավորվեցինք լեն ու արձակ տախտերի վրա ու սկսեցինք դրույց անել:

Էս խոսակցության միջոցին գյուղի շներն սկսեցին անհանդիստ հաջել ու ոռնալ:

— Գեղ է, — միաբերան բացազանչեցին գյուղացիք:

— Ընչի՞ց էք իմանում, — հարցրի ես:

— Գիլահաջ են տալի:

— Գիլահաջը ո՞րն է: Մի՞թե շները միշտ մի տեսակ չեն հաջում:

— Չէ՛, գելի վրա ուրիշ տեսակ են հաջում, մարդի վրա՝ ուրիշ: Մարդկանցից էլ՝ գողի վրա ուրիշ տեսակ են հաջում, անցորդի վրա՝ ուրիշ: Սմբի վրա ուրիշ տեսակ են հաջում, կենդու մարդի վրա՝ ուրիշ...

Հենց էս խոսքի մեջն էինք, որ մի հրացան տրաքեց, շների հաջոցը սաստկացավ ու միաժամանակ մի աղմուկ բարձրացավ:

— Հասեք հե՛յ... տարա՛վ, տարա՛վ, հե՛յ...

Գյուղացիք դուրս թափվեցին:

2.

Գյուղիցը դուրս գիշերվա մթնում լավում էր խուլ աղմուկ: Ես մենակ էի մնացել: Տան կնանիքն էին միայն դռան առջև հավաքված վաշ ու վիշ անում: Միջների պառավն անիծում էր-

— Վա՛յ, անտեր մնաս դու, անտե՛ր:
Ու մըմնջում էր «Գիլկասլի» աղոթքը:

«Ալալոս,
Գալալոս,
Գելը կասկեմ երկու բըթով,
Երկու բըթով, երկու մատով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Սուրբ Սարգսի ձիու ձարով,
Նահատակաց կարմիր քարով,
Գիլի ճամփեն մոլոր անեմ,
Գիլի տտամ խմոր անեմ,
Ռտները թուլ,
Ականջը խուլ...»

ու կրկնում էր:

— Վա՛յ, անտեր մնաս դու, անտե՛ր...

— Էն ի՞նչ է, նանի, — հարցրի ես, թեև համողված էի, որ
գել էր:
— Գել է, որդի, գել: Ոչխարը սարից գեղն են բերել—ետե-
վիցն եկել է:

3.

Վերջապես խառն ի խուռն բարձր-բարձր խոսելով ու ծիծա-
ղելով եկան դյուղացիք:

— Տեսա՞ր, բա որ ասի՞նք:

— Ուրեմն գե՞լ էր:

Ինձ պատասխան տալու փոխարեն առաջ բերին մի թխադեմ
17—18 տարեկան պատանու:

— Ա՛յ տղա Սիմոն, էդ ո՞նց էլավ:

— Ա՛յ տղա, դե էն ա ոչխարը բերում էի տուն անեմ: Բերի
գեղին մոտեցրի, մին էլ տեսնեմ ոչխարը դես ու դեն խախալ
խախալ է անում. շունն էլ հա է անում, թե ոչխարի մեջն ընկնի:
Հենց էս ժամանակը շները թփի տակիցը մի գիլի վեր կալան ու
ետեիցը լարվեցին:

— Հասի՛ հա հասի՛, բռնի՛ հա բռնի...
Մին էլ տեսնեմ ոչխարը կտրկան էլավ ու փախս առավ: Ետ-
մտիկ տամ, որ մի անտեր գել էլ մի ոչխարի բռնել է, հետը կողք-
կողքի ընկել ու պոչով ետեիցը քշում է, ոչխարն էլ հետ չափ ըն-
կած գնում է, ոնց որ հարսանքի ձիավոր ըլի...

— Հա՛յ հա հա՛յ... շուռ եկա դեսը: Թվանքը որ տրաքեց,
սա ոչխարը թող արավ փախավ:

— Անտերը ոչխարի միջին տապ արած է էլել հա՛, — նկատեց

քեռի Անդրիասն ու դարձալ դեպի ինձ:— Էդպես է դրանց սովորությունը: Էդ ու որձ գնում են: Մինը ոչխարիցը մտաիկ տալի է անում, կամ եթե հաջողեցնում է՝ հենց ոչխարի միջին է տալի անում, մյուսը դալիս է երևույթք ըլում, խափս է տալիս, շանն ու չորանին անում փախչում: Տապ արած ընկերը, ետեվիցը էս խառնուկ ժամանակը, ոչխարը տանում է: Շատ անգամ էլ ոչխարը տանում է պահում ու ետ դալիս ընկերին օգնության: Ուստա չորանը փախած գիլի ետեկց դնալ չի, գիտի որ ետնուց վտանգ կա պատրաստած:

— Սա էլ է լավ ժափ եկել, — դովեցի ես պատանի հովվին, — կարողացել է գիլի բերանից անխորձանք աղատել ոչխարը:

— Գիլի բերանից անխորձանք ոչխար աղատելն ինչպես կլինի, — խոսեց պատանին:— Գելը տեսալ, որ ոչխարը ձեռիցը գնում է, մինչև ի՞նչ հասնելը մի ընկելում ոչխարի դմակը պոկեց տարալ:

— Հա՛, էդպես է, — դարձյալ մեջ մտալ տանտերս:— Գելը ոչխարին հասալ թե չէ, եթե տանելու հնար չկա, դմակին կտա ու մի տալումը դմակը կպոկի:

— Տավարին էլ հասալ թե չէ՝ բողաղիցը կրոնի, քեռի Անդրիաս, — մեջ մտալ մի տալարած:

— Տավարին էնքան էլ հեշտ չի, — պատասխանեց քեռի Անդրիասը: Տավարիցը մինը գոռաց թե չէ, ամբողջ տավարը հասկանում է բանն ինչումն է, որովհետև գիլի գոռացնելը ուրիշ տեսակ է. խակույն բոլորը հավաքվում են քամակ քամակի տալիս ու պոչները դեմ անում կանգնում...

— Տավարը հեշտ է շաղվում, քեռի Անդրիաս, ու հեշտ էլ գելի փայ է դառնում: Էն, ինչ ձին է անում գելի հետ, ոչ մի անասուն չի անիլ:

Ձին գիլի հոտն առալ թե չէ, ախանջները սրում է, փոռացնում, փոնչացնում ու ձեռաց բոլոր ձիերը հավաքվում են մի տեղ: Մադիանները իրենց քուռակները մեջտեղ են առնում ու նրանց շրջապատում կանգնում, երեսները դեպի ներս, քամակները դեպի դուրս—գելերի կողմն արած քացիները պատրաստի: Ու աստո՛ժ հեռու տանի, թե մի գել մտակցալ: Բայց կովում գիլի համար ամենավտանգավորը որձ ձին է: Որձ ձին մադիանների հետ շրջանի մեջ չի մտնում: Բաշը թափ տալով ու փոռացնելով կատաղի պտտվում է շրջանի չորս կողմը, հարձակվում է գելերի վրա ու առաջն ընկած գելին տրորում, ջարդում առաջի ոտներով կամ քացու մի դարկով փռում գետին:

Եթե մադիանը մենակ է, քուռակը դռչի տակն է առնում ու կանգնում:

Մենակ ձիու էս կողմն էս կողմն է թռչում գելը ու հանկարծ

վրա թռչում, բողազիցը բռնում կամ մի դարկով փորը պատ-
ում: Երբեմն քթիցն էլ է բռնում, շունչը կտրացնում: Երբեմն
էլ ձիու առաջն է ընկնում ու փախար տալիս—իրբև թե վախենում
է. ձին էլ դունչը տնկած ետևիցն է ընկնում, իրբև թե հալածում
է: Հանկարծ ետ է դառնում ու բռնում:

Էրա հո էչն է,— խոսեց քեռի Անդրեասը:— Գելն էչի հեա
խաղում է, խաղում, ու ականջներն իրեն քաշում առաջը փախար
հարում: Էչն ընկնում է հետևիցը, իրբև թե հալածում է: Էսպես
հեռացնում է, հասցնում մի ապահով տեղ ու ետ դառնում ու-
տում... Դրա համար էլ ասում են՝ «Իչի գերեղմանը գիլի փորն
է»:

— Ոչխարն էլ է գիլի ետևիցն ընկնում.— նկատեց մի ուրի-
շը:

— Հենց գելն էլ էդ երկուսին— իշին ու ոչխարին— ամենից
շատ է սիրում:

— Իսկ ամենից քիչ մոտենում է խողին ու գոմեշին:

— Բա ի՞նչ:

— Պա՛, ի՞նչ բանը ծիծաղ է: Պամ գելն ի՞նչն բռնած ժամա-
նակը՝ է՞ծը հնայեա է ճղճղում, որ գելը թող է անում փախչում:

— Բայց մի թե գելն էդ քան անվախ ու համարձակ մոտենում
է գյուղին, հարց ավի ես:

— Գելը, երբ որ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է,— պա-
տասխանեց քեռի Անդրեասը: Բայց հիմի սկսվում է գիլի դժար
ժամանակը: Չմեռը գալիս է, անտառի որսը դժվարանում է,
ապրանքը սարից ցած է գալիս—տուն է մտնում: Գիլի ապրուստը
կարգվում է: Սուր որ նեղացնի՝ գեղ էլ կմանի, գեռ տուն էլ: Սո-
վի ձեռիցը ձմեռը գալիս է շեմքիցը շուն է տանում լախում:
Մուկն է որսում: Ծառի փթրակ է ուտում, իր լակտան է ու-
տում... Դե սուին է պատճառն էլի, որ ձմեռը միանում են, բո-
լակ են կաղմում, որ ուժեղ լինեն, միասին հարձակվեն...

Չմեռը գեռ էլի մեղանում, մեր սարերում, մեր անտառնե-
րում մի բան է ճարվում. նապաստակներ են կամ ուրիշ մանր-
մունք կենդանիներ: Վերջապես եղնիկների ու եղջերուների ետե-
վից են ընկնում, քշում են դեպի սառած գետերը: Տանում են
սառուցի վրա ճղատում— ու վրա են հասնում խեղդում ուտում:
Բայց էն ինչ դաշտ տեղերն են, որ դրանք էլ չկան, գելը սուից
սուի չի համարձակ ու վաանդավոր է դառնում: Ծառ անդամ կա-
տաղում է: Ու դաշտ տեղերը մարդկանց վրա էլ է հարձակվում
ու փնասում:

— Տղերք, դե խոսքն էստեղ ինձ ավեք,— էն կողմից խոսեց
Ծորագյայցի Ավոն ու սկսեց իր պատմությունը:

— Մեղանում, դաշտ տեղերում, գելը շատ ավելի վտանդա-

վոր է, քան սար տեղերում: Մեզանում գելերը ձմեռվան գիշերը
գալիս են գեղի մեջը ման գալիս: Շներին պահում ենք, որ
չտանեն—չուտեն: Չմեռները մեզանում շատ վտանգավոր է մե-
նակ ճանապարհորդելը. մանավանդ եթե մութն էլ վրա հասավ:
Այ՛ն ձեզ պատմեմ իմ գլխի եկած մի դեպք:

Ծիրան անունով մի եզն ունեինք: Մի ձմեռ էս եզը կորավ:
Ախպերս ինձ դրկեց ման գալու: Ես էլ էսպես 16—17 տարեկան
չահել տղա եմ: Գնացի գեղի չորս կողմը ման եկա ման—չգտա:
Գոմահանդ ունեինք, էնքան էլ գեղիցը հեռու չի: Ասի՛ եզը սո-
վոր է, կարելի է էդ կողմն ըլի գնացած: Գնացի էդ գոմահանդը:
Գնացի, էս գոմը նայեցի, էն գոմը նայեցի, վերջը տեսնեմ՝
գրուստ որ եզը մի գոմումն է: Եզը դուրս արի. դուրս գամ տես-
նեմ արդեն մութն ընկնելու վրա է: Սիրտս մի ահ ընկավ: Տես-
նում եմ, որ լուսով չեմ կարող գեղը հասնեմ: Մտածում եմ՝
գնա՛մ չգնա՛մ:

Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ամայի ձյունապատ դաշտ, շեն չկա, ձեն չկա.
ձեռիս էլ մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՞նչ պետք է անեմ: Ասածու անունը տվի, եզը առաջս արի
քշեցի: Մի քիչ տեղ անց էի կացել. հանկարծ իրիճվան էն դառը
քամու հետ մի տխուր ձեն ընկավ ահանջովս: Կանգնեցի, ահանջ
դրի...

Տեսնեմ գլխի տնոց է.— ո՛ւ ո՛ւ...

Ո՛ւ... էս տնոցին միացավ ամբողջ խումբը ու սարսափով
լցվեց դաշտը: Մտիկ տամ՝ որ աջ կողմս, հեռվում, մթան մեջ
ջուխտ—ջուխտ վառված ճրագների մի բազմություն է շարժ-
վում... էլ ի՞նչ. ձեռաց հասկացա, որ գելերի աչքերն են— սո-
ված բոլուկ է... Եզը ետ տվի դեպի գոմերն ու քշում եմ, ո՛նց
եմ քշում, մագում եմ ո՛նց եմ մագում... Ետ նայեմ, որ արդեն
գալիս են: Եզը թող արի փախա, ընկա գոմը: Ընկա գոմը,
բարձրացա սների գլխներին գերանների վրա դատարկ տեղեր են
լինում է՛...

— Հա՛, իմանում ենք, կոնդերի վրա:

— Հա՛, էդ կոնդերից մեկին վեր էլա: Դեռ չէի տեղավոր-
վել— մին էլ տեսնեմ եզանս գոռոցը բարձրացավ: Չարմանք բան
է, թե էնքան տարածությունն ինչպես մի երկու բույեումը
կտրեցին ու հասան:

— Վա՛հ, գիլի ստին ինչը կհասնի,— խոսեց քեռի Անդրիա-
սը:— էն սարի գլխիցը որ մի բան նկատեց՝ մին էլ կտեսնես կող-
քը դուրս եկավ: Դրա համար են ասում էլի, թե՛ գելն ազրեյի է:

— Հա՛, էն էի ասում,— շարունակեց Շորադյալցի Ավոն:—

Յգանս գոռոցը բարձրացավ ու խոկույն էլ կտրեց, խրխուոցն ընկավ: Սրխուոցն էլ կտրեց, միայն գեղերի ժընգժնգոցն եմ լսում, ու լսում եմ՝ ոնց են լափում...

— Վա՛յ, Օհրան ջան... դուրս թռավ սրտիցս:

Բայց ի՞նչ Օհրանի ժամանակն է: Ես իմ գլուխն եմ լաց ըլում: Մտածում եմ թե՛ էս լավ էր, եղնովը կըլեն մինչև կլուսանա, կամ կըկշտանան ու կզնան, կամ, ասում եմ, ինձ չեն գտնիլ... Դու մի ասի՛ սոված գիլի բոլո՛ւկ, ես հիսուն ասեմ, դու հարյուր իմացի, ձեռաց հախուել են, ու մին էլ տեսնեմ, մութը գոմը լցվեցին էն ջուխտ-ջուխտ վառած ճրագները ուխտները բաց արած...

Գտան...

Եկել են լցվել, ներքևից ազահ-ազահ ինձ են մտիկ անում: Ես էլ չորացել եմ մնացել վերևը գերանին կալած: Մտիկ արին մտիկ ու թող արին դուրս գնացին:

Շունչս ետ եկալ: Ասի՛ «փառքդ շատ ըլի աստոծ, էս էր՝ ազատվեցի...»

Դեռ աստծու փառքը բերանումս, մին էլ ի՞նչ եմ լսում: Իմ ուղղությամբ վերևից կտուրը քանդում են, չանգերովը հողը ետ են տալի: Արդեն լսում եմ չանգերը կոճերին են դիպչում...

Սառը քրտինքը վրա տվեց... Շտապեցի տեղս փոխեցի, անց կացա մյուս կոնդի վրա կուչ եկա:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ:

Էլի եկան ներքև: Մտիկ արին, որ մյուս կոնդի վրա եմ. ետ դուրս գնացին: Հիմի էս կոնդի վերևից սկսեցին քանդել կտուրը:

Դարձյալ տեղս փոխեցի: Էսպեսով՝ նրանք քանդելով, ես տեղս փոխելով՝ հասանք վերջին կոնդին:

Էլ ո՞ւր գնամ:

Եկան մտիկ արին կատաղած ու ետ գնացին: Քանդում են, ո՞նց են քանդում...

Մի սուր դանակ ունեի գրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռիս բռնած՝ մտքումս աղոթք եմ անում. — Տեր աստոծ, դու ինձ ազատ անես էս նեղ տեղիցը...

Իսկ հենց անգաճիս վերևը քանդում են: Քանդելով հասան կոճերին: Հասան կոճերին. մինը կոճերի արանքովը թաթը մեկնեց, որ կոճը ետ քաշի: Թաթը բռնեցի ու էն սուր դանակովը գլ'ըթ կտրեցի... Թաթը փախցրեց ոռնալով, կոնձկոնձալով ետ գնաց ու կտերն իրարով անցան: Իմացել էի, որ գեղերի մինը եթե վիրավորվեց՝ մյուսները վրա են թափվում նրան ուտում: Ասի՛ ուրեմն՝ սրան ուտում են: Հիմի սպասում եմ, որ սրան կուտեն կպրծնեն ետ կզան: Էլի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ:



Մինը կոների արանովը բարը մեկնեց, որ կոնը եւս քաշի:

Ականջս ձենի է: Գիշերվա մի ժամին, ոնց որ երազում՝ մի
բարակ ձեն եմ լսում:

— Այո հե՛յ...

Ինձ են կանչում...

— Տեր աստված, մի՞ թե ինձ են կանչում... Մի՞ թե ախարս
է... Մի՞ թե մերոնք են... Գոմից ձեն եմ տալիս, գոռում եմ:

— Աղունիկ հե՛յ... Էստեղ ե՛մ... Գոմումն ե՛մ... Գեղերն
ինձ ուտում ե՛ն... Օղնեցեք հե՛յ...

Էլի նրանք ձեն են տալի, իմ ձենը չեն լսում, թեև ես շարու-
նակ կանչում եմ:

Մին էլ տեսնեմ հրացանները արաքեցին, ետևից լավեցին հե-
ռացող գեղերի կաղկանձն ու մարդկանց հարահրոցը: Պարզ ճա-
նաչեցի ախարս ու մեր գեղացի տղերանց ամեն մեկի ձենը:

— Այո հե՛յ...

— Էստեղ ե՛մ... Էստեղ ե՛մ... կենդանի ե՛մ...

Ներս թափվեցին գոմը:

— Փառք քեզ աստո՞՞... Փառք քեզ աստո՞՞, — ուրախացած
ու դարձացած կանչում են ամենքը: Ցած եկա վերջին կոնդի վը-
րից: Ախարս գիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ:

— Էլ լաց մի ըլի, դնա աստծուն փառք տուր, որ էսօր նոր
մորից ծնվեցիր, — կանչեցին էս ու էն կողմից ու ինձ դուրս բե-
րին դուրսը, ուր թափված էին մեր Օրբան եղան սակորները:

Դեռ լույսը չէր բացվել:

Հեռվից լավում էր գեղերի ունոցը:

4.

Շորագայացի Այոյի պատմությունից հետո, խոսքն ընկավ
գիլի ոհմակի վրա:

Երկար ձմեռներն ու ապրուստի դժվարությունն են պատ-
ճառը, որ գեղերը ոհմակ են կաղմում, բացատրում էին դյուղա-
ցիք:

Ռոնում են, իրար կանչում, հավաքվում, միանում, որ ու-
ժեղ լինեն թե՛ հարձակվելու և թե՛ հարձակման դիմադրելու ժա-
մանակ:

Ամեն միևր մենակ հեշտ կհաղթի ձմեռն ու կկորչի, քան թե
խմբով, և ամեն միևր չի կարող էն ճանկել, ինչ որ կճանկի
խումբը:

Եվ հավաքվում են հիսունով, հարյուրով, մի քանի հարյու-
րով:

Սարսափելի բան է գիլի ոհմակը. մանավանդ էդ լինում է
ձմեռը, գիլի ամենաբաղցած ժամանակը, երբ շատ անգամ գելը

քաղցրից կատաղում է: Էդ ժամանակ, ասում են, գելերն իրենք էլ են իրարից վախենում: Երբ ոհմակով մի տեղ կանգնում են հանգրստանալու՝ շրջան են կազմում ու հնարես են վեր թափում, որ իրար երես պահեն, չեն հավատում մեկ մեկու: Վախում են իրար ուտեն: Բայց ոմանք էլ ասում են՝ նրա համար են հղպես անում, որ իրար տեսնեն ու հարկավոր դեպքում իսկույն նշան տան իրարու, և իբրև թե բոլորը նայում են իրենց գլխավորին:

Գիլի համար մուժը, ճամփի դժվարությունը, հեռավորությունը — ոչ մի նշանակություն չունեն:

Գելն էնքան արագավազ է, որ մի գիշերվա մեջ երեք չորս օրվա ճիու ճամփա կկտրի: Իսկ գիլի սրատեսության վրա հասկես մի գրույց կա ժողովրդի մեջ:

Ասում են: Մի անգամ արծիվն ու գելը վեճի բռնվեցին, թե իրենցից ո՞րն է ավելի սրատես: Գելն ասավ՝ մի ամպոտ օր ես սարի գլուխն էլա, ամպի միջով մտիկ արի տեսա՝ հեռու մի դաշտում մի սև ցելի մեջ մի ակոսում մի սև գառն է նստած:

Արծիվն էլ, թե՛ ես էլ երկնքի երեսն ելա, ներքև մտիկ արի, մի ծխնելույզի միջից տեսա կրակի վրա դրած մի պղինձ խուփը վրեն: Խփան ճեղքիցը նայեցի, տեսա պղնձի միջին կաթը, կաթնի երեսին էլ մի սպիտակ մազ:

Էսքան արագավազ ու սրատես դազան է գելը: Եվ էս ամենի հետ միասին՝ շատ խորամանկ:

Նա մինչև լավ չիմանա, որ հարձակումն ապահով է՝ չի հարձակվիլ: Ուրիշ բան է, եթե սովից խելագար մի գել իրեն կորցրած գցի ամառկարա վտանգի մեջ. բայց սովորաբար գելը շատ է զգույշ ու խորամանկ:

Մի գյուղացի հսպես պատմություն արավ: Ասում էր. մի տարի թակարդ էի սարքել: Առավոտը վաղ վեր կացա գնացի տեսա մի բեռ է ընկել մեջը: Միայն ոտիցն է ընկել ու ոտը փշրվել է, սատկել է: Վեր կալա թակարդիցը հանեցի էն կողմը գցեցի: Մինչև գլուխս կախ ես թակարդովն էի. եղած, մին էլ տեսնեմ վեր կացավ կաղին տալով փախավ: Հա՛յ, հա հա՛յ, էլ ո՞րտեղ, իրեն տվեց անտառը: Դու մի ասիլ անտերը սրտամեռնուկ է տված եղել:

Գիլի ոհմակն էլ, ճմեռը ճամփա կտրելիս իրար ետևից է գնում — ծլլաշարուկ, ու միշտ ամենից ուժեղն ու փորձվածը առաջին է գնում: Եվ սա երկու հարմարություն ունի նրանց համար: Մին, որ առաջի գնացողները ձնի մեջ կոպար են բաց անում ետևից եկողների համար բաց-պատրաստ ճամփա է լինում, մին էլ՝ որ ոչ ոք չի կարող իմանալ, թե իրենք քանիսն են եղել: Եվ էդ է պատճառը, որ ոչ մի որսկան չի կարող ասել, թե էս ոհմակը, որ անցել է, քանի գել է եղել մեջը:

Աստված հեռու տանի, թե ոհմակի աչքովը մի որս ընկալի:
Ուրիշ դադան լինի, թե ընտանի կենդանի, իսկույն չորս կողմից
չըջապատում են ու էլ փրկություն չկա: Իսկ կծղակավորներին,
հատկապես եղնիկներին ու եղջերուներին, քչում են դեպի սառած
գետերը, սառուցի վրա ճղատում ու վրա թափում, կամ քչում
են դեպի բարձր ժայռերը, ժայռերից թռցնում ու իջնում ներքև
լափում:

Ոհմակը վտանգավոր է և մարդու համար: Եթե բազմու-
թյուն չեղալ՝ մի կամ երկու մարդից ոհմակը չի վախենալ, թե-
կուղ հրացան ունենան: Մինչև անգամ հրացանն ավելի վտան-
գավոր է: Հրացան արձակես թե չէ, իսկույն կհարձակվեն: Հի-
մի կասեք՝ հապա ինչի՞ց է վախենում գելը:

Էս մասին գյուղացիք մի քանի պատմություն արին:

5.

Գելը ոչ մի բանից էնպես չի վախենալ, ինչպես կրակից—
առաջինը խոսեց իմ տանտերը, քեռի Անդրիասը:

Մեր կողմերը, դե գիտեք, որ գել շատ կա: Էնպես տեղ ու-
նենք, որ հենց գելի բուն է, որ կա: Մի մեծ ծմակ ունենք, Մոտ-
կորա ծմակ ենք ասում: Էդ ծմակումը մի թալա կա: Էդ թալու-
մը էնքան գել կա, որ անունը դրել են Գիլի թալա:

Մի ձմեռնամուտ իրիկուն սարի գոմերիցը տուն եմ գալի:
Հակառակին էլ էս Ստեփան տղես էլ հետս է. իննը-տասը տարե-
կան երեխա է: Որ եկանք էդ թալի դիմացը, մի շան ձեն ընկալ
ալանջովս: Ասի՝ ով դիտի ոչխար են բերել էս կողմերը, չորանի
չունն է հաջում: Չեն տվի.

— Ա՛յ չորան, հե՛յ...

Էս ձեն տալն էր էլի:

Շան հաջոցը կտրեց ու, ձեզ մատաղ, մին էլ էն տեսնեմ, էդ
ծմակիցը գելի տուտը բաց էլալի, ուխները բաց արած գալիս են.
Ե՛նց են գալիս, աչքերս սևացան...

Դու մի՛ ասիլ, հաջողը գել է եղել: Ախր չէ՞ որ գելը ոռնում
է, բայց շանից հաջել է սովորում ու շատ անգամ էլ հաջում է:

Չեռիս թվանք կա, միայն լավ դիտեմ, որ գելի բոլուկի վրա
թվանք չեն դցիլ. թվանք գցես թե չէ— ավելի կատաղի վրա
կտան:

Էրեխեն թե՛ ապի, էն ի՞նչ են:

Ասի՝ վախիլ մի՛, քեզ մատաղ, զոչաղ կաց: Արի օգնի էս
խաչամն ու չոր ճյուղերը հավաքենք: Չորս կողմից խաչամն ու
չոր ճյուղերը ձեռաց կիտեցի ու կրակ տվի, բոցը ծուլ ելալ:
Մոտկորա ծմակը լիքը փետ: Մինչև սրանց հասնելը վրա տվի,
թե՛՛տ արի, բոցն ելալ ծառերի ծերը:

Սրանք եկել են, ի՞նչքան են եկել. չորս կողմներս կտրել են
հեռու կանգնուտել ժընդժընդում են ու ատամները չխկչխկացնում:
Աչքները ծմակի մթան մեջ քուքուրթի բոցի նման ջուխտ-ջուխտ
վառվում են: Մարդ մտիկ տալիս զարզանդում է:

Էրեխեն կալել է փեշիցս ու լաց է լինում:

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, ես էստեղ եմ...
լաց մի՛ ըլի, որ լաց ըլես-կզան մեզ կուտեն...
Էրեխեն ձենը փորն է գցել ու փեշիցս կալած զոզում է, ո՞նց
է դոզում...

Տեր աստված, ասում եմ, դու ազատես էս նեղ տեղիցը:
Ի՞նչ անեմ: Հույսս դրել եմ կրակի վրա: Էն էլ փետը հատնում է,
երեխեն էլ փեշիցս պինդ բռնել է, թողնում չի մի քիչ հեռանամ,
փետ բերեմ կրակին վրա տամ:

Մտիկ մի ցըցչորի ծառ կար: Կրակը բոթեցի սրա տակը,
սրա կողքին էլ մի կտրած ծառի չոր բլուլ կար, էն էլ քաշեցի
վրեն թեժացավ, ոնց թեժացավ, կարմիր լուսն ընկել է ամբողջ
ձորը:

Իմացի սարիցը չորանները նկատում են, որ, ախպեր, էս
ձորումը, էս ժամանակին, էս ի՞նչ կրակ պետք է լինի, որ քիչ
է մնում ծմակը կրակի:

Մտածում են, մտածում ու ձեն են տալի:

Ա. կանջ դենեմ, որ էս մեր Շամիրի ձենն է:

Ուրախանաք, ինչ որ մենք ուրախացանք:

Ձեն տվի.

— Շամիր հե՛յ... դիլի բոլուկ է. չորս կողմս կտրել են...
երեխեն հետս է... օգնեցեք հե՛յ...

Հենց էս կանչելն էր: Մի քանի չորան իրար հետ ձեն տվին:

— Վախիլ մի՛ք, վախիլ մի՛ք, դալիս ենք հե՛յ...

Ու պարզ լսում ենք, ոնց են իրար ձեն տալիս շտապեցնում,
ոնց են շներին կանչում:

— Թորլան հե՛յ, Ղայթար հե՛յ, Չամբար հե՛յ, Չալակ
հե՛յ...

Շների կլանչոցը վեր ելավ ու մտավ ձորը:

Էստեղ երեխեն նորից սկսեց հեկեկալ ու լաց ըլիլ:

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, հրես կզան:

— Տղե՛րք, էս մեր Շամբրին Թորլան անունով մի գելխեղդ
չուն ուներ: Մին էլ տեսա էս շան ձենը մտիկ ծմակում դրըն-
գաց: Սրա ետևից մնացած շները, շների ետևից կրնկակոխ չո-
րանները: Չորանների խզրոզուն ու շների հաջոցը ծմակը դրըմ-
բացնում է: Մին էլ Ստեփանս թե՛ «ապի, գելխերը փախչում են»:

Ասավ ու ուրախությունը խառնվեց սարսամիին, սկսեց աղա-
ղակել ու առաջն ընկած փետի կտոր, քար, հող շալտել գե-
լերի ետևից:

Էլ գեղն ո՞վ կտա: Մտակի մթնումը կորան, գնացին:
Տղերն եկան:

— Ա՛յ տղա, էս ի՞նչ բան էր:

— Բանն էլ որն է, ձեր տունը չքանդվի, հապա հսպես,
հսպես...

Հատեղից վեր կացանք գնացինք չորանների մտա, մինչև
լուսացավ, սուսվտար խմբով եկանք տուն:

Էս բանն, ախպեր, իմ գլուխն եկավ: Կրակը մեղ աղա-
տեց, — վերջացրեց խոսքը քեռի Անդրիասը:

6.

Ուստա Սարգիս, հիմի քո սլատմությունն արա, — էս ու էն
կողմից ձեն տվին գյուղացիք. — Շորագյալից գալիս ոնց էլա՞մ:

— Էլ ի՞նչ տեսմ, դե գիտեք էլի, — սլատասխանեց ուստա
Սարգիսը:

— Մենք գիտենք, ամա աղեն գիտի ոչ:

— Պա՛տմի, ուստա Սարգիս, սլա՛տմի լսենք, տեսնենք Շո-
րագյալի ճամփին քեզ հետ ի՞նչ է սլատահել, — խնդրեցի ես:

Ուստա Սարգիսը դուռնաչի էր: Թինկը տված չիրուխ էր
քաշում, վրա նստեց ու սկսեց սլատմությունը.

— Շորագյալի ճամփին սլատահած սլատմությունն էսպես է:

Մի հացապահաս տարի վեր կացանք ես, դամքաչ Ակոփն ու
գհուլչի Դավիթը մեր դուռնա գհուլը վեր կալանք ասինք գնանք
Շորագյալա գեղերը հարսանիքներ անենք, հացահատիկ հավա-
քենք բերենք ձմեռը կառավարվենք:

Դե գիտեք էլի, որ Շորագյալա հացը համ լափն է լինում,
համ առատ, իսկ մեղանում, սարերում, սակավ է լինում,
եղածն էլ շատ անգամ կարկուտը տանում է:

Գնացինք դուռնա անելով, հարսանիք անելով գեղեգեղ ման
եկանք: Բավական ցորեն-գարի հավաքեցինք, մի ծանոթի պահ
տվինք, մենք ետ ճամփա ընկանք դեպի մեր տները:

Գիտեմ ոչ Շորագյալ եղել էք թե չէ, Հոռոմ անունով մի գեղ
կա. էդ գեղիցը դուրս ենք եկել գալիս ենք դեպի Արթիկ: Եկանք,
ճամփին մութն ընկավ: Մնկնահար ձյուն. ցուրտն էլ հո թրի
նման մարդի երես է կտրատում: Ճամփեն էլ լավ չգիտենք. Գնա
թե պետք է հասնես Արթիկ:

Էս մեր Դավիթն առաջինն էր գնում: Մին էլ թե՛ տղեք
եկեք, որ գեղը գտել եմ:

— Ա՛յ տղա ո՞ւր է:

— Թե՛ հրեն ճրագները երևում են:

Մտիկ տանք տեսնենք, ճշմարիտ որ հեռվում շատ ճրագներ

Են երեւում: Միայն ես նկատում եմ, որ էս ճրագները ժամ են գալի, դեռ դեն են գնում:

Ասի՛ տղեք:

Թե՛ ինչ է:

Ասի՛ էս գեղ չի: Մին, որ ձմեռը սրանց գեղերի տների դուռն ու կտուրը փակ, ճրագները չեն երևալ, մին էլ որ էս ճրագները որ՝ տեսնում եք, ման են գալի:

Թե՛ բա էս ի՞նչ են:

Ասի՛ գելեր են: Գիլի բոլուկի բերան ենք ընկել, սլատրաստվեցեք ես լսել եմ, որ դուռնի ձենին դելը — էլ վախենում է թե ինչ, — մոտ չի գալի: Չուռնա դհոլը սարքեցեք: էս խոսքումն ենք, տեսանք ճրագները մոտենում են, մթնումը, ձնոտ դաշտումը դեռ ու գեն վազում են, ցրվում են, ուղում են մեզ շրջապատեն: էնքա՛ն են, էնքա՛ն են, որ էլ հաշիվ չկա:

Ես ու Ակոփը դուռնեն դլեցինք, էս Դավիթն: էլ դհոլը — դը՛մբ հա դը՛մբ, կես գիշերին, էս վերանա դաշտումը անում ենք: Չուռնա դհոլի ձենը վեր ելավ թե չէ — էս գելերս ոնց որ տեղն ու տեղը մեխես, մնացին իրենց տեղերը մեխված:

Մին էլ ոռնոց վեր քաշեցին, տեր աստված, ի՛նչ ոռնոց: Չուռնի հետ ձեն ձենի են տվել, ոռնում են:

— Վայ ծիծա՛ղ, — էս ու էն կողմից բացապանչեցին դյուղացիք: — Ուստա Սարգիս, լավ է ծիծաղներդ գալիս չէր:

— Ա՛յ տղա, ի՞նչ ծիծաղ կդար, սիրտներս սևացել էր. դանակ տալիք՝ արյուն չէր կաթիլ:

— Հետո՞, հետո՞...

— Հետո մենք ճամփա ընկանք, սրանք էլ մեզ հետ: Մենք անելով գալիս ենք, սրանք էլ չորս կողմերս կտրած հեռու մթնումը ցինդիր-ցինդիր անելով գալիս են: Կարծես սլար են գալի: Գլուխներդ ինչ ցավեցնեմ. էսպես դնալով գիշերվա մի ժամանակը առաջներս մի շան հաջոցի ձեն լսեցինք հեռու: էս հաջոցի վրա մի քանի շներ սկսեցին հաջել ու ոռնալ, ու մին էլ տեսնենք մոտիկ գեղի ճրագները դուռը դուրս եկան: Մարդկանց ձեները հասնում է մեզ:

Ուրախությունից դուռնա դհոլի ձենն ավելի դլեցինք:

Քանի գեղին մոտենում ենք, գելերը ետ են ընկնում: Վերջապես հասանք գեղին, սրանք ետ դառան, կորան:

Գեղացիք ճրագներով, աղմուկով առաջ եկան — մնացին դարմացած: Տեսնում են՝ երկու դուռնաչի ու մի դհոլչի անելով գալիս են ու հետները հարսանքավոր չկա:

— Ա՛յ ուստեք, բա հարսանքավորնե՞րը որտեղ են:

Ասում ենք՝ հարսանքավորները ետ դառան դնացին: Չուղեցին ձեք գեղը մտնեն:

— Էդ ո՞վ էին որ...

— Գեղերը...

— Ո՞նց թե գեղերը...

— Ախպեր, ասինք, պատմելու ժամանակը չի, ցրտատար էլանք, մեռնում ենք, մեղ մի տաք տուն տարեք, էնտեղ կպատմենք:

Տարան մի տաք օդա, բուխարին թե՛ արին, հացը դրին առաջներս, դլխներիս հավաքվեցին էսպես, ինչպես որ մենք հավաքվել ենք, ու սկսեցինք պատմել: Պատմում ենք ու ծիծաղում. պատմում ենք ու ծիծաղում:

Վերջն էլ իմանանք, որ էն գեղը չենք եկել, որտեղ դալիս էինք, ճամփեն կորցրել ենք — ընկել ենք Պարնի գեղ:

7.

— Դուք հո կրահն ու գուռնեն եք ասում, բայց դելը մի բանից էլ է վախենում. թե իմանա՞ք ընչի՞ց, — հարց տվեց օտարականը:

— Թոկից, ձեն տվին մի քանիսը:

— Ո՞նց թե թոկից, — դարձացան չգիտցողները:

— Հա, ճճարիտ է, թոկը որ ետևիցդ քաշ տաս՝ դելը կվախենա, մոտ չի դալ, — հաստատեց քեռի Անդրիասը:

— Ա՛յ տղա, թոկն ի՞նչ է, որ դելը թոկից վախենա:

— Ո՞վ գիտի, օձի տեղ է դնում ինչ է, ի՞նչ իմանաս:

— Մեր գեղումը Եղո անունով մի ջահել մարդ կար, — պատմեց շորագյալցին: — Մի շատ սրտոտ ու քաջ մարդ: Երեսին որ թուր բռնեիր՝ երեսը ետ չէր թեքիլ: Ինքն էլ թրի-թվանքի հետ խաղացող մարդ էր:

Սրանից մի 4—5 տարի առաջ մի ձմեռ գործով գնում է մեր հարևան գյուղերը ու մի քանի օր ուշանում: Մի երեխա ուներ, շատ էր սիրում: Մի իրիկուն լուր է առնում, թե բա՛ երեխեզ հիվանդ է, քեզ է ուզում: Վեր է կենում, թե՛ պետք է գնամ: Սրա առաջն են ընկնում, բռնում են, համոզում են, թե մութը գիշեր-հազար ու մի չար ու փորձանք, հազար ու մի գել ու գազան, սպասիր՝ ասում են, գիշերը լուս անի, կլուսանա, կգնաս երեխիդ կտեսնես: Սա պրպին է կանգնում թե՛ չէ որ չէ, հենց էս կես գիշերին պետք է գնամ, թուրը վրես, ձին տակիս, ի՞նչ պետք է պատահի: Ինսանի թարսություն էլի: Չեն կարում հաղթեն, կես գիշերին ձի է նստում, ճամփա ընկնում: Կիտա-ճամփին գիլի բոլուկը սրան շրջապատում է: Դու մի ասիլ հետը թոկ ունի, ինքն էլ փորձված, բանգետ մարդ է. թոկը երկար բայց է թողնում ու ձիու ետևից քաշ տալիս: Գեղերն էլ մոտ չեն գալիս, երկու կողմից թոկին մտիկ տալով վազ են տալի: Էսպես

բավական տեղ անց է կենում: Մի տեղ էլ, ո՞նց է լինում, ի՞նչ է լինում, թողի ծերը ձեռքիցը դուրս է պրծնում ու վեր է ընկնում: Սա ձին քշում է: Մի քիչ տեղ գնում է, գեղերը վրա են տալիս: Թուրը հանում է հենց առաջին հասնողին տալիս ... Գեղերի սովորությունն էլ գիտեք էլի. մինը թե վիրավորվեց՝ մյուսները նրա վրա կթափեն, կուտեն: Էդպես էլ ձեռավորին թող են անում, վրա են թափում էս վիրավորվածին: Եղոս ձիուն մտքակում է, քշում, բավական տեղ քշած գնում է: Գեղերը վիրավորվածին լափում են պրծնում, ետ նորից ընկնում սրա ետևից: Սա էլի ուղում է թուրը հանի, որ դարկի, քաշում է քաշում, դուրս չի դալի: Տեսնում է՝ հասնում են իրեն — հերոսից պատյանն ատամով կրծոտում է, ինչ անում է, չի անում՝ թուրը դուրս չի դալիս: Դու մի՛ ասի՝ գեղին որ դարկել է, առանց արյունը սրբելու տեղն է դրել, արյունոտ թուրը կպել է պատյանին, ամբացել:

Էլ ի՞նչ երկարացնեմ, գեղերը վրա են տալի, իրեն էլ են ուտում, ձիուն էլ:

Մյուս օրը լուրն եկավ. գնացինք տեսանք արնոտ ձյունի վրա իր ոսկորներն էլ, ձիունն էլ, թուրն էլ, պատանոտած շորերն էլ թափված, ցրված դեռ ու դեռ:

— Իսկ էն մարդին, որ գեղերը կերել էին, ձեզ էդ բռնորն ո՞վ պատմեց, — հարցրեց մի գյուղացի:

Այդ մարդու խելքն ու փորձն ինչի՞ համար են, — պատասխանեց պատմողը: Գնացինք տեսանք ձրնի պարզ հեռքերը երևում են, որ կողմից է եկել ու որտեղից է շրջապատել գիլի բռնուկը, որտեղից է Եղոս սկսել թողը քաշ տալ, մինչև որտեղ է քաշ տվել, որտեղ է ձեռիցն ընկել: Մի քիչ էլ գնացած է ու հեռքերն իրար են խառնված, տակն ու վրա են եղած, ու թափված են գիլի բուրդն ու ոսկորները: Նրանցից բավական հեռու էլ իրեն ու ձիուն են կերել: Թուրն էլ բերինք, տեսանք պատյանը մարդու ատամներով կրծոտած: Քաշեցինք, քաշեցինք, չկարացինք դուրս քաշել. տվինք վարպետին, քանդեց, հանեց. տեսնենք արյունոտ, կպած պատյանին:

— Ախոս մարդ, — էս ու էն կողմից աստուացին գյուղացիք: — Ա՛յ թե ընչի համար են ասել, թե համբերությունը կյանք է: Սա, հեր օրհնածի մարդ, մի քիչ համբերի լուսանա էլի ...

8.

— Տղե՛ք, համատար գեղիցն էլ վերը վնասակար դադան չլինի, դուք ի՞նչ եք ասում, — խոսեց մի գյուղացի էս պատմությունից հետո:

— Էդպէս էլ իմացած զնաք, որ չի քննել, — հաստատեց
քեռի Անդրիասը ու դիմեց ինձ.

— Դու ի՞նչ կարծիքի ես, պարոն:

— Ես էլ էդ կարծիքին եմ, — պատասխանեցի ես: Արդեն
գրքերից էլ հայտնի է, որ ոչ մի դազան գիլի չափ վնաս չի տա-
լիս մարդուն: Մանավանդ էն երկրներում, որտեղ գլխավորա-
պէս անասնապահութեամբ են զարապում: Ամեն մի տերութե-
թեան մեջ էլ ահագին վնաս է տալիս: Միայն Ռուսաստան տա-
րեկան մտտ մեկ միլիոն անասուն է միջացնում:

— Հարգա ի՞նչպէս է, որ տերութեանները դրա մասին չեն
մտածում, մի ճար անում, — խոսքս կարեց մի գյուղացի:

— Ի՞նչպէս չեն մտածում: Տերութեաններ կան, որ առանձին
վարձատրութեան են տալիս դել սպանողներին: Կանոնավոր
կումբ են գիլի դեմ: Դրա համար էլ էնպէս տերութեաններ
կան, որ մեջներն էլ դել չկա. օրինակ Անգլիան, Գերմանիան...

— Վա՛հ, — զարմանքից բացազանչեցին գյուղացիք: Ո՞նց
թե... հիմի էդ երկրներում էլ դել չկա՞:

— Չկա...

— Ա՛յ երկիր... Ապրանքդ ազատ բաց թող ու հանգիստ
դնա քու գործին ...

— Էնպէս տերութեան էլ կա, — շարունակեցի ես, — որ հաշ-
վով դիտեն, թե քանի դել կա իրենց երկրում, չորսը թե հինգը:

— Էդ ի՞նչ բան է, ավելի զարմացան գյուղացիները, — մե-
զանում իսկի մարդի հաշվով դիտենք ոչ, նրանք գելն էլ են
հաշվել:

— Որ ասում ես գելը վերջացնում են, ի՞նչպէս են անում,
վարժապետ, — հարցրեց մի ծերունի, որին Սահակ էին ասում:

— Չանսդան միջոցներով, բի՛ճա Սահակ: Ինչպէս ասի՝ տե-
րութեաններն առանձին վարձատրութեան կամ պարգև են տա-
լիս ամեն մի սպանած գիլի համար, որսկաններն էլ աշխատում
են շատ դել սպանեն, որ շատ փող ստանան: Մինչև անգամ
կազմակերպված ընկերութեաններ կան, որ միայն գիլի որսի
համար են: Էնպէս երկիր էլ կա, օրինակ Իսպանիան, որ եթե
տերութեանը չի վարձատրում դել սպանողին՝ ժողովուրդն
է վարձատրում: Սպանողը գելը գցում է իշի կամ ձիու վրա ու
գեղեղեղ ման ածում, ապրանքատերերից փող է հավաքում: Եվ
ամենքն էլ ուրախութեամբ տալիս են:

— Չէ՛, ես էդ չէի հարցնում, պարոն ջան, ես էն էի հարց-
նում թե՛ ընչո՞վ են սպանում, ինչպէս են կոտորում:

— Հա՛, էդ ես հարցնում: Ասեմ, բի՛ճա Սահակ, էդ էլ
ասեմ:

— Իհարկե, հրացանով սպանելն ու թակարդով բռնելը ար-

դեն դուք էլ գիտեք: Բացի հրացանն ու թակարդը, էնպես տեղեր էլ կան, որ խորը փոսեր են փորում, օրինակ մի սաժենն ու կես խորությամբ, մի սաժեն էլ լայնությամբ: Երեսը ցախն ու մախով ծածկում են, վրեն միս են դնում, չորս կողմն էլ դեռ ցած ցանկապատում, որ դեղը թռչի հանկարծ ընկնի մեջը: Սրանով իհարկե, չի կարելի շատ բան անել:

Էնպես տեղ էլ կա, որ ամբողջ հասարակություններով հավաքվում են, դնում են շրջապատում անտառի որոշ մասերը: Որսկանները հրացանները ձեռներին պատրաստի երեք կողմը կտրում են, իսկ չորրորդ կողմից մի բազմություն անտառն է մտնում ու հրացան արձակելով, աղմուկով, հարայ-հրոցով, շանով-բանով դադաններին քշում, բերում դցում որսկանների բերանը: Էս էլ անտառոտ տեղերն է լինում, ու էս միջոցն էլ չեմեծ արդյունք տալիս: Պատահում է, որ ահագին աղմուկից հետո մեջ տեղ մի կամ երկու նապաստակ են հայտնվում կամ պատահում է, որ դուրս եկող դադաններն անվնաս էլ փախչում, աղատվում են: Ծատ քիչ են սպանվում:

Ռուսաստանի ձնոտ դաշտերումն էլ մի ուրիշ տեսակ որս են անում: Չիով ընկնում են դելի ետեից: Ծնկահար ձյունի մեջ թաղվելով դեղը դուռով է վազում և շուտ էլ հողմում է: Ետեվիցը հասնում են՝ հենց տեղն ու տեղը դադանակով սպանում: Բայց ավելի շատ գիլին կոտորում են թույնով: Սատկած ոչխարը մաշկում են, միսը շերտ-շերտ կտրատում, արանքները թույն են լցնում, ետ նորից մորթին վրեն քաշում ու տանում գիշերը հանդերում վեր դցում: Սոված դելեր — դալիս են ուտում ու տեղն ու տեղը կոտորվում:

9.

— Վարժապետ, ճշմարիտ է, դեղը դադան է ու մարդուն էլ շատ է վնաս տալիս, միայն էդ որ պատմեցիր, ախպեր, ինչ թաքցնեմ, մեղքս եկավ, — խոսեց ծերունի Սահակը:

— Հետո գիլին մեղք կգա՞ն որ, Սահակ բիճա, — ձեն տվեց մի հովիվ:

— Ընչի՞, դեղը շունչ կենդանի չի՞, — սկսեց վիճել Սահակ բիճեն:

— Գելն ի՞նչ է որ. — մեր շան պես անասուն էլի, — խոսքն առավ քեռի Անդրիասը: Ուղիղ շան պես: Որ էն շունն էլ չոլերը դցես՝ անտեր, սոված թողնես, հալածես-կվայրենանա, կդառնա գիլի պես մի բան էլի: Ինչպես որ էն սոված, վայրենի դելն էլ, որ բերես կուշտ պահես, պահպանես, խնամես, կընտելանա, կդառնա մեր շան պես տանու կենդանի:

— Հետո գելը տանու կլինի՞, որ, քեռի Անդրիաս:

— Լա՛վ: Շատ է պատահել: Գիլի ճուտը բռնի բեր տանու արա, տես կլինի թե չէ:

— Հապա ինչու է ասած՝ գելն ինչքան էլ տանու անես — էլի աչքն անտառումը կլինի:

— Էդ էլ է ճշմարիտ: Մի սերնդի, երկու սերնդի աչքն անտառումը կլինի, բայց կամաց կամաց անտառը կմոռանա՝ կդառնա տանու կենդանի շան նման: Եվ հենց ինքն էլ շան ցեղից է, էլի: Գելն էլ կաղձված է հնպես-ինչպես շունը: Գելն էլ շան պես տարին մի անգամ 3—10, բայց սովորաբար 4—6 ձագ է ծնում, ու ինչպես շունն իրեն համար բուն է փորում կամ մի անկյուն է գտնում ու հետեղ ծնում ու մեծացնում ձագերը, հնպես էլ գելը: Կամ գետնում բուն է փորում, հետեղ ծնում ու մեծացնում իր ձագերը կամ ընկած ծառի փշակում, կամ մեծ բուն, կամ հենց ծմակի խիտ տեղերը: Նա էլ է հնպես սիրում իր ձագերին, ինչպես ամեն մի ծնող կենդանի: Մի վտանգի հոտ առնելիս բերանով՝ շատ զգուշ ու քնքուշ իրենց տեղից տանում է ավելի ապահով տեղ: Եվ երբ իր բնի մոտերքում որս չի անիլ ու վնաս չի տալ, որ կասկած չբերի էդ տեղի վրա:

Գելի էգն էլ, ինչպես շանը, ավելի քնքուշ է, դունչն ավելի սուր ու պոչն ավելի բարակ: Գելն էլ պատահում է, որ նույն պես կատաղում է, ինչպես շունը: Եվ կատաղած գելից շատ են վախենում ու սարսափով հեռու են փախչում բոլոր վայրենի կենդանիները:

Վերջապես գելն էլ շան պես 12—15 տարի է ապրում: Ավելի երկար շատ քչերն են ապրում, ինչպես և շների մեջ:

Մի խոսքով միևնույն կենդանիներն են. միևնույն խնամքի տակ ու կուշտ, մյուսը վայրենի, հարածված ու սոված: Իսկ սովը... Սովն ինչ ասես կանի, ձեզ մատաղ: Սովը մարդին էլ կդարձնի սարսափելի, ո՞ւր մնաց էն անտառի գիլին, — խոսքը վերջացրեց քեռի Անդրիասը:

— Ճշմարիտ ես ասում, քեռի Անդրիաս, — ասացի ես: Մեզանում սովորութիւնն չկա, միայն յուսավոր երկրներում շատ է պատահում, որ մարդիկ վայրենի անասուններին ու գաղաններին բռնում են, բերում են տանու անեն. փորձում են, վարժեցնում են, բան են սովորեցնում: Միևնույն երկու գիլի ճուտ էր բռնել բերել տանը պահել: Կարճ ժամանակում հնքան էին ընտանիացել, որ ազատ տան մեջն ամենքի հետ էլ խաղ էին անում ու շան հետ միասին միևնույն բնումը բնում: Մի քանի ժամանակից ետք միևնույն սատկում է: Ասում է՝ մենակ մնացածը քանի ժամանակ էր էլ ոչ խաղ էր անում, ոչ կարգին կերակուր էր ուտում: Տխուր վեր ընկած դարդ էր անում ու ոռնում: Ի հարկե հետըզ

հետե մոռացավ ու էլ նա աշխուժացավ: Մեծացավ, ու ասում է, մեզ հետ հնքան էր կապվել, որ որտեղ նստում էինք, միշտ կողքներինս վեր էր ընկնում և ուրիշներին էլ թողնում, որ մեզ մոտենան: Ասում է՝ վախեցինք մարդու վնաս տա, շղթայով կապեցինք, իսկ մի քանի ժամանակից ետը մի շղթիկ դադանանոցի վրա ծախեցինք: Անցավ դրանից մի տարի ու կես թե երկու տարի, լավ չի միտս, էդ դադանանոցին պատահեցի մի քաղաքում: Հետաքրքրվեցի, ներս մտա, ասի տեսնեմ, իմ դեղը կենդանի է թե չէ: Ներս մտա հարցրի: Ի՞նչ մի ասիլ դեղը մոտիկ վանդակում պառկած է եղել: Չենս իմացավ թե չէ՝ վեր թռավ, ճանաչեց, ուրախացավ, ու ի՞նչ էր անում, ի՞նչ էր անում, չեք կարող երեվակարյել: Աշխատում էր ինձ մոտենալ, պոչը շարժելով, ծմբրայով դես ու դեն էր ընկնում վանդակում: Ինձ էլ թվաց, թե մի մոտիկ, հարազատ արարածի հանդիպեցի, և դուրս գալիս մի տեսակ ցավ դդացի:


Ինչ կասեք սրան: Ահա պատահած դեպքը: Եվ ճշմարիտ է ստում քեռի Անդրիասը. դեղն էլ շան պես մի արարած է, միայն վայրենի, հալածված ու սոված:

Արդեն գիշերվա կեսն էր, որ մեր դռույցը վերջացրինք: Ծները դուրսը հաջում ու երկար ու ձիգ ունում էին:

— Անտերը դեղի վրա պտիտ է դալիս. հեռանում չի: Հանդրատանալու չի, մինչև էս գիշեր մի վնաս չտա: Տղե՛ք դդույշ կացեք, ապրանք չտաք ուխը:— Ասավ քեռի Անդրիասը դյուրակացիներին, որ բարի գիշեր ասելով, իրար ետևից դուրս էին գնում մեր օթախից: Ի՞նչուք նրանցից մինը երկար ու դիլ հե՛յ հե՛յ աղաղակեց ու դյուրի շները հեռու թաղերից սկսած ավելի կատաղի սկսեցին հաջել ու ոռնալ խմբովին:

Սոված դեղը պտրտվում էր դյուրի շորս կողմը:

1018



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիշորը	3
Ահմադը	20
Իմ ընկեր Նեստն	24
Գրադը	29
Երկաթողու շինութիւնը	34

Մ Ե Ր Ո Ն Ք

Գաբո բիճու շերամապահութիւնը	38
Քեռի Սեչանը	40
Նեսոյի քարաբաղնիսը	42
Եղջերուն	46
Մայրը	53
Գեղը	56

Պատ. խմբագիր՝ Ղ. ԿՈՄՈՒՆԻ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՅ 01908 Գ. 200. տիրած 10000 4³/₄ տպ. մամ. Հեղ. 2 մամ.:
Ստորագրված է տպագր. 26/XII-47 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի փ. № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0067539

[304]

ԳԻՆԸ 3 Թ

III
2119